

15 (338)  
20.05.2013

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել զինաստրուքին եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍԱՐԱՐ

Лусарар

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

## ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍՆԱԿԱ ԱՍՐՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ՈՒՂԵՐՁԸ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԳԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ



Սիրելի շրջանավարտներ:

Մի քանի օրից կհնչի դպրոցական վերջին զանգը: Շնորհավորում են ձեզ այդ առթիվ: Զանգ, որ ոչ միայն ազդարարում է հանրակրթարաններում ուսումնական տարեշրջանի ավարտը, այլև ավետում է շրջանավարտներիդ մեծ կյանք մտնելու մեկնարկը: Ասել է թե՛ հետևում են մնացել դպրոցական անհոգ տարիները, և վկայական ստանալով՝ դուք ձեռք եք բերում նոր իրավունքներ ու պարտականություններ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացու հպարտ առաքելությամբ:

Ավարտական տարի է նաև իններորդյակների համար, որոնք պետք է դեռ որոշեն որտեղ շարունակել հետագա ուսումը՝ ավագ դպրոց, միջին մասնագիտական հաստատություն, թե արհեստագործական ուսումնարան: Համոզված են, ուսման հետագա վայրի ընտրությունը լինելու է դպրոցում յուրաքանչյուրիդ ստացած գիտելիքների ճիշտ հասցեագրումը:

Ուզում են շնորհավորանքի ջերմ խոսք հղել հատկապես մեր ուսուցիչներին, որոնց մվիրական ջանքերը միշտ էլ նպատակաճանդված են ձեզ անհրաժեշտ գիտելիքներ փոխանցելուն: Այդ գիտելիքները լիարժեք մեր ժողովրդին ծառայեցնելով՝ դուք հիրավի կարողացնեք նրանց սպասելիքները, ու դա յուրօրինակ երախտիք կհանդիսանա ձեր ուսուցիչներին:

Առջևում քննություններն են, և այդ կապակցությամբ բոլորիդ սրտանց հաջողություններ են մաղթում:

## ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ՝ ԱՄԵՆ ՕՐ ԵՎ ԱՄԵՆՈՒՐ

Արդեն ավանդույթ է դարձել ուսումնական տարին սկսել և ավարտել մեր պետականության կարևոր տոներով: Սեպտեմբերի 1-ը, ի նշանավորումն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման, սկսում ենք Անկախության դասով, մայիսին անցկացնում Արիության դաս փառապանծ հաղթանակների կապակցությամբ: Անկախություն և Արիություն՝ մեկը մյուսով պայմանավորված հասկացություններ, որոնցով իմաստավորվում է մեր պատմությունը: Մեր նախահայր Հայկ Նահապետի այդ զենք իր կենսաբանական հատկությամբ ոչ թե յոթ սերունդ այն կողմ մարում է, այլ աստվածային ուժով յոթնապատկվում, ասել է թե՛ բազմապատկվում է սերունդների մեջ: Հայ ժողովուրդը և հատկապես նրա արցախյան հատվածը հերոսների պակաս չունի: Ճակատագրի կամոք՝ ոչ իրենց պատմական հայրենիքում քաջագործություններով աչքի ընկած զորավարներ ունենք նույնիսկ, որոնք մեծ դերակատարություն են ունեցել տվյալ երկրի անկախության ու ազատության համար պայքարում:

Վայրերը, փողոցները, առանձին շենք ու ծառ անգամ: Եվ թեպետ Արիության դաս ենք անցկացնում խորհրդանշական մեկ օր, սակայն արիություն սովորում ենք ամեն օր ու ամեն քայլափոխի: Եվ պարտադիր չէ, որ այդ դասն անպայման լինի զենքով կռվելու մասին: Ամեն մեկս մեր բաժին գործը լա՞վ ենք կատարում, ազնի՞վ ենք, արդա՞ր ենք մեկս մյուսի հանդեպ, ուրեմն՝ զորավոր ենք և զորացնում ենք մեր հայրենիքը: Ամեն ժամանակ թելադրում է ի՞ր մարտահրավերները և պայքարի ի՞ր ձևերը: Խաղաղ ժամանակներում էլ պայքարի զենքն արթուն է. երկրի տնտեսական զորացմանն ուղղված նախաձեռնությունները, գիտական ներուժի ամրապնդումը, օրենքի գերակայության և սոցիալական արդարության ապահովումը ևս պայքարի դաշտ են: Ու այդ բնագավառներում ձեռք բերած ամեն մի հաջողություն յուրովի խիզախման արդյունք է, որը նույնպես կարելի է հաղթանակ համարել: Նույնքան կարևոր, որքան որ այն ձեռք է բերվում ռազմի դաշտում:

Արիության այդ դասը մեզ պետք է ամեն օր և ամենուր:

«ԼՈՒՍԱՐԱՐ»

Իսկ մեր հայրենիքում հերոս են բոլորը՝ մարդիկ, լեռները, գետերը, բնակա-



Սկարում.- «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի հանրապետական օլիմպիադայում հաղթած Արցախի հավաքականը:

## ԱՐՑԱՆ՝ ԻՄ ՏՈՒՆ, ԻՄ ՍՐԲԱՎԱՅՐ, ԻՄ ՐԱՆԳՐԿԱՆ

Դարեր շարունակ Արցախի լեռներն ականատես լինելով իրենց լանջերին ապրող հայ ժողովրդի տառապանքին, սովեր էին դարձել: Մի վիթխարի ծիրանի փող առանց իհն ահի, նոր խնդրությամբ հնչեցրեց մեր արդար երգը: Այն ազդարար էր Արցախ աշխարհի ազատության պայքարի: Մեր կյանքն այնպիսի էլեգ ունեցավ, որ երկընտրանքի առաջ կանգնելը մեզ կխորտակեր:

Անհրաժեշտ էր կատարել վճռական քայլ՝ կանգ չառնելով ոչ մի խոչընդոտի առջև խիզախել, քանզի հաղթում են նրանք, ովքեր խիզախում են:

«Արցախն առանց հայերի». այս սահմուկեցուցիչ միտքը մեր ուղեղում ցամաքում էր այնպես, ինչպես ջուրը ավազի մեջ, և հիշողությունն ակամա շրջելով մեր պատմության քառուղիներով, հասկանալի էր դառնում մի պարզ իրողություն. «Ուժ կարելի է գործադրել միայն այն դեպքում, երբ արբեցած ոգին չի ընկճվում անգամ հետևանքները կանխատեսելուց»: Եվ մենք գործադրեցինք այդ ուժը՝ համոզված, որ պետք է արթուն լինել նաև արթուն ժամանակ: Քանի թշնամին չի հնազանդվել, քանի երկիրն օտարի ձեռքին է՝ միայն խաչ և զենք: Պատերազմի մեջ հաղթում է արին, հաղթում է նա, ով թշնամու հետ չափվելուց առաջ իր հոգում կառուցել է հաղթանակի շենքը: Երբ ժողովուրդը հասկանում է իր ազատության գինը և պատրաստ է հանուն նրա նահատակվել, նրան ծնկի բերելը դառնում է անհնար: Բռնությունը գլուխ հանելուն պես պետք է պատժվի:

Արցախի ազատաբաղձ ծայրը խառնել է բոլոր կանոնները և ստեղծել կռվելու իր կարգ ու կանոնը, հաղթելու իր օրենքները, որից ավելորդ են դառնում մեծաթիվ, անհամեմատ գերազանց զինվորություն ունեցող թշնամու վճիռը՝ պատերազմի դաշտում լուծելու խնդիրը:

Արցախ... վշտերի քո ծովից ծնվեցին Վահագների երկնային, մութ խավարումիդ արև փայլեց, փոթորկված հոգիդ խաղաղվեց, և սիրտդ, որ ահա ուր-որ է՝ պիտի կանգնեք, բաբախել սկսեց: Եվ զինվորագրվեցին հայրողները՝ չափստալով, որ կգոհվեն Արցախի լուսաբացի համար, նրանք պատերազմի մեջ մտան՝ համոզված, որ եթե մի օր հողը գրկի իրենց տաք մարմինը, այն կկարմրի ոչ թե ամոթից, այլ սեփական արյունից: Նրանք

«ազգայինը գերադասեցին անձնականից և անձնականով հարստացրին ազգայինը»: Նրանք ապրեցին ազգի կյանքով, հանուն ազգի, հանուն հայրենիքի: Իսկ ովքե՞ր էին նրանք: Նրանք հայ բազկի խենթ երակն էին, առյուծասիրտ հայրերու հետնորդներն էին, որոնց հաղթական գոռ արդականներից դրոպաց հայոց սարն ու ձորը: Սիրտ էր փառավորվում, երբ հուսահատ պահը հանկարծ լուսավորվում, փայլատակում էր հաղթանակի շողով, երբ ամենաթվար պահին օգնության եկած աշխարհագորդը վճռում էր հաղթական ելք: Այդ, այդպես կռվեցին մեր հավաքական ու համերաշխ միաբանությամբ, որն էլ բոլոր ժամանակներում մեր լուսավոր նախնիների առաջին բաղձանքն է եղել: Ու այսպես, մաս-մաս կերտեցինք Արցախյան հերոսամարտի պատմությունը, որը դարձավ մեր անկախության հենարանը: Սակայն միշտ չէր հաջողվում առանց արցունքի ըմբռնվել այս հաղթանակները: Վիշտն անողոք հողմի պես մի հարվածով մեր աչքերում սպանում էր ժպիտ ու ուրախություն, երբ կշեռքի վրա հավասարվում էին կյանքի ու մահվան ճեղքները, երբ օրը ցերեկով մայրամուտ էր ապրում դեռ չծագած արևը: Ժամանակի համար կյանքը մի ակնթարթ է, ու այդ ակնթարթը նրանք մվիրեցին հայրենիքին: Նրանք իրենց մահից հետո էլ լեգենդ դարձան՝ առաջնորդում են մեզ, որպես լուսակիր ջահեր՝ մեզ ուղեկցում են դեպի անկախություն: «Պատերազմը չի ներում թույլ և անարի զինվորներին, քանզի Հաղթանակի աստվածը սիրում է համբուրել նրա ճակատը, որը պինդ է ոգով և հավատալ գիտե իր գործընթացը» (գեներալ-լեյտենանտ Իվանյան): Հավերժական քննության պես Աստծո տրված այս աշխարհում հավատում են միայն հաղթողին: Եվ Հաղթանակի աստվածն այս անգամ էլ համբուրեց մեր ճակատը Շուշիի ազատագրմամբ: Ովքեր գիտեն արժեքը Մայիսի 9-ի, մեզ մման թող գոտեպնդվեն, հայրությունն ազատ է հոգով, մենք չէինք կարող մնալ անազատ պատյանի մեջ, վերջապես այն պայթեց... և այսօր եռատոն է:

Ուղիղ 72 տարի առաջ ֆաշիստական հրոսակները վտանգ սպառնացին Խորհրդային Միությանը: Սպառնացող վտանգի դեմ պայքարում հայ ժողովուրդն անմասն չմնաց:

ՕՐԱԳԻՐ

ԴԱՍԸ ՎԱՐԵՑ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԸ

ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒ Մ

Օրերս Արցախում էին ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղագիտարանի երեք գիտաշխատողներ՝ Հայկական աստղագիտական ընկերության (ՀԱԸ) համանախագահ Արեգ Միքայելյանի ղեկավարությամբ: Այցի նպատակը ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն դպրոցական աստղագիտական դասախոսությունների ծրագրի իրականացումն է, աստղագիտական գիտելիքների տարածումն ու դպրոցներում օժտված և աստղագիտությամբ հետաքրքրվող աշակերտների հայտնաբերումը՝ հետագա կապ պահպանելու և նրանց մասնագիտական աճին օժանդակելու համար:



Աստղագետները ԼՂՀ 49 փոխնախարար Մ. Համբարձումյանի ուղեկցությամբ եղան Ստեփանակերտի ֆիզմաթ, հ. 8, 11, Շուշիի Մուրադյանի անվան ավագ դպրոցներում և Արցախի պետական համալսարանում, հանդիպումներ ունեցան աշակերտների և ուսուցիչների հետ՝ նրանց առջև հանդես գալով դասախոսությամբ: Պրոֆեսիոնալ աստղագետները պատմեցին ժամանակակից աստղագիտության խնդիրների ու զարգացումների, հայ աստղագիտության պատմության, ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղագիտարանի և հայկական աստղագիտության ներկայիս վիճակի, Վիկտոր Համբարձումյանի և մյուս նշանավոր հայ աստղագետների մասին:

Աշակերտներին և ուսուցիչներին տրամադրվեցին աստղագիտական հանրամատչելի նյութեր: Ծրագիրն իրականացվում է ամերիկահայ նշանավոր աստղագետ, Կոռնելի համալսարանի պրոֆեսոր Երվանդ Թերզյանի և Հայկական աստղագիտական ընկերության աջակցությամբ:

Ա. Միքայելյանի տեղեկատվությամբ՝ ծրագիրն արդեն երկու տարի է՝ գործում է ՀՀ-ում: Ուսուցիչների վերապատրաստման համար կա «Գալիլեյան ուսուցիչներ» վերտառությամբ ծրագիր, որը հաջողությամբ անցնողներն ստանում են հավաստագիր, և տրվում է այն ուսուցիչներին, ովքեր աստղագիտությունը դասավանդում են նորագույն մեթոդներով, հատուկ մոտեցումներով: Նրանք կարող են վարել աստղագիտական խմբակներ և խրախուսվել ՀԱԸ-ի կողմից: Հայաստանում արդեն երեք ուսուցիչ տրվել է նման հավաստագիր: Չի բացառվում, որ Արցախում նույնպես այդպիսի ուսուցիչներ լինեն:

Սեփ. լրատվություն

Մայիսյան եռատոնի կապակցությամբ հանրապետության բոլոր ուսումնական հաստատություններում անցկացվեցին Արիության դասեր՝ Հայրենական մեծ և Արցախյան պատերազմների մասնակիցների, ԼՂՀ պաշտպանության և կրթության և գիտության նախարարությունների պատասխանատուների, ՊԲ զեներալների, սպաների մասնակցությամբ: Հանրակրթական դպրոցներն այդ նպատակով միջոցառումների հատուկ ծրագիր են կազմել:



Ստեփանակերտի Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցը, ինչպես տեղեկացանք դպրոցի տնօրենի կրթական աջակցությունների գծով տեղակալ Ժաննա Գրիգորյանից, բազմաբովանդակ միջոցառումներով է դիմավորել եռատոնը: Կազմակերպվել է

չարադրությունների, նկարների, պատի թերթերի մրցույթ: Լավագույն աշխատանքները քաղաքապետարանի կողմից արժանացել են մրցանակների, իսկ պատանի նկարիչների ստեղծագործություններին այցելուները կարող են ծանոթանալ կրթօջախի մուտքի վահանակներից: Միջին օղակի դասարանների միջև անց է կացվել «Ուրախ մեկնարկներ» մրցությունը: 9-րդ դասարանների տղաները յուրատեսակ քննություն են հանձնել ավտոմատի քանդում-հավաքումից, իսկ աղջիկները՝ բժշկագիտությունից («Սանպոստ»): Բոլոր դասարաններում անցկացվել է դասղեկի հատուկ ժամ: Հայրենասիրական երգերի մրցույթը մի առանձին ոգևորություն է հաղորդել այդ ամենին. լավագույն համարներին շուտով ակնատես կլինենք առաջիկայում անցկացվելիք համաքաղաքային փառատոնում: Այդ ամենի շարունակությունը եղան Արիության դասերը, որոնցից մեկին (9-րդ դասարանում) ներկա էինք նաև մենք: Այն անցկացրեց Արցախի ազատամարտիկների միության հանձնախմբի համակարգող Ալվարո Շեկյանը: Մարդ, ով անցել է Գոյամարտի բոլոր ոլորտներով, բազմիցս նայել մահվան աչքերին՝ կամավորական ջոկատներում դիրքապահ զինվորից մինչև կանոնավոր բանակում հրամանատարական պաշտոններ, զորացրվել 2007-ին, 56 տարեկանում և

լինելով ԱԱՄ՝ աշխատող՝ այսօր զբաղվում է ազատամարտիկների ու նրանց ընտանիքների սոցիալական հարցերով: Ալվարոն չի սիրում խոսել պատերազմի մասին, «Վերքերիս վրա աղ լցնել չեմ ուզում», - ասում է, բայց տեսնելով աշակերտների այդ տարիքին հատուկ հետաքրքրասիրությունը ռազմագործողությունների նկատմամբ, ակամայից հիշողությունները նրան տարան դեպի պատերազմական առանձին դրվագներ: Աշակերտները կլանված լսում էին ազատամարտիկի ուշագրավ պատմությունները Արցախյան պատերազմի, հատկապես նրա հայրենի Ղազանչի գյուղի պաշտպանության և ազատագրման մասին: Գյուղ, որ շրջապատված է եղել ադրբեջանական 14 բնակավայրերով, բայց հերոսաբար դիմադրել է ազերի հրոսակներին. 27 հոգով՝ 1500-ի դեմ:

Նա պատմեց, որ մեր Ազատամարտին մասնակցում էին երիտասարդներ և տարեցներ, կանայք ու երեխաներ: Եվ բերեց հայրենի գյուղից 12-ամյա Դադստան Հայրապետյանի օրինակը, որին ոչ մի կերպ չկարողացան համոզել հեռանալ գյուղից, և օգնում էր իրենց:

Անհնար էր առանց հուզմունքի լսել այն մասին, թե ինչպես մեր խիզախ ազատամարտիկի պատմածներին հավելեց, որ պատերազմի տարիներին ռմբակոծության պայմաններում դպրոցում չէին ընդհատվել պարապմունքները. նա դա ևս հայրենասիրություն որակեց ուսուցիչների ու աշակերտների կողմից:



Մարզադաշտում, ներկայացուցիչ շեֆ-գործամասից և ուրիշներ: Երեխաների խոսքում հպարտություն կար հաղթանակի և թախիժ՝ կորուստների հանդեպ, նվիրվածություն հայրենիքին, հույս, հավատ՝ գալիք օրվա նկատմամբ: Դպրոցի տնօրեն Անահիտ Պողոսյանը, շնորհավորելով բոլորին Մայիսյան փառահեղ հաղթանակների առթիվ, ի դեմս զեներալ-մայր Վ. Բալայանի, շնորհակալություն հայտնեց ՊԲ-ին՝ դպրոցում ռազմահայրենասիրական դաստիարակությունը բարձր հիմքերի վրա դնելու գործում աջակցության համար: Վ. Բալայանը և մյուսները բարձր գնահատեցին աշակերտների պատրաստվածությունը: Գեներալը կոչ արեց երեխաներին լավ սովորել, հարուստ գիտելիքներ ստանալ, քանզի բանակում օգտագործվող ժամանակակից տեխնիկան լիարժեք կարող են աշխատեցնել միայն բանիմաց և բարձր ունակություններ ու կարողություններ ունեցող զինծառայողները: Այսօրվա հայրենասիրությունը դա է:

Ս. ԽԱՀՍՏՐՅԱՆ

ԱՐՁԱՆ՝ ԻՄ ՏՈՒՆ...

բայց արդեն փորձառու այնքան, որ կարելի է վստահել մի ամբողջ հանրապետություն ու հանգիստ շունչ քաշել՝ լցված լույսով ու հույսով նրա ապագայի: Ես հավատում եմ մեր ժողովրդի հավերժությանը: Համոզված եմ, որ պատմությունը չի ների մեր այսօրվա որևէ թերացում կամ ճակատագրական սխալ: Մերունդները հպարտությամբ պետք է հիշեն Արցախի պաշտպանների խիզախ համառությունը: Ոչ մի արտասուք, ոչ մի հեկեկանք, քաջություն, քաջություն և նորից քաջություն. սա՛ պիտի լինի մեր սերունդների կոչումը, միայն այս բարձր արժեքով կզտենք մեր անկախությունը և կկարողանանք ապահովել այն անվտանգությամբ: Կյանքը մշուշվում է, երբ հեռանում ես

հարազատ երկրից, եկեք չմշուշապատենք մեր կյանքը, բնավորվենք մեր օջախներում և շենացնենք մեր տուն Արցախը: Արցախ, քո հողի բույրն ինձ հարազատ է, ինչպես մորս շունչը, քո գիրկն ինձ ավելի է ջերմացնում, քան շողն արևի, և ես ինձ ազատ եմ զգում, ազատ՝ ինչպես արծիվը ճախրանքի պահին: Արցախ, քո մասին խոսելիս արյունս եռում է, սիրտս սկսում է արագ բաբախել, և ես ակամայից բարձրաձայնում եմ. «Ես քո մի ծիլն եմ, Արցախ, ես քո մի շիվն եմ, Արցախ, ես քո զինվորն եմ, Արցախ: Արցախ՝ իմ տուն, իմ օջախ, իմ սրբավայր, իմ հանգրվան»:

Գայանե ՄԱԹՎՈՍՅԱՆ Զորավանի միջև. դպրոցի ՄԿԱԳ փոխտնօրեն

ՄԱՏԱՂ ՍԵՐՈՒՆԴ

ԻՄ ՄԱՅՐ ԶԱՅՐԵՆԻՔ, ԿՈՒԶԵՄ ՔՈ ՇՈՂԸ ԼԻՆԵՍ

Հայրենասիրությունը երեխայի մեջ դաստիարակվում է դեռ մանկապարտեզում: Հայրենիքի հանդեպ սիրո ու պաշտամունքի հունդերը սերմանվում են նրանց մաքուր և անբիծ հոգիներում, տարիների հետ դրանք աճում, ծլարձակում են և արմատավորվում: Շատ կարևոր է, որ մանկապարտեզում աշխատող դաստիարակները նվիրում ու մեծ պատասխանատվությամբ կատարեն այդ վեհ գործը:

Ստեփանակերտի հ. 1 պետական մանկապարտեզի կոլեկտիվը մանուկների հետ պատասխանատու և դժվարին աշխատանքում տալիս է իր ողջ սերն ու հոգատարությունը, դաստիարակում և սովորեցնում, բազմաթիվ գեղեցիկ միջոցառումներ կազմակերպում: Դրանց շարքում առանձնանում է հատկապես Մայիսյան եռատոնին նվիրված հիանալի միջոցառումը: Այս անգամ «Արևիկ» խմբի դաստիարակներ Նելլի Պողոսյանը և ժամանա Մարգարյանը որոշեցին այցելել մարշալ Բաբաջանյանի անվան տանկային զորամասի զինվորներին՝ նրանց շնորհավորելու փառապանծ տոնի կապակցությամբ: Նրանց աջակցեցին պարուսույց Գայանե Սաղաթեյանը և երաժշտության ղեկավար Լուսինե Սարգսյանը:

Մայիսի 8-ի առավոտյան «Արևիկ»-ները, մեծ ոգևորությամբ և ցնծությամբ, զինվորիկներ դարձած, զորամասի տրամադրած ավտոբուսով շարժվեցին դեպի Իվանյան: Ամբողջ

ճանապարհին ղողանջում էր փոքրիկների երգն ու ծիծաղը: Չորամասի հրամկազմը և զինվորները մի



առանձին ջերմությամբ ու խանդավառությամբ դիմավորեցին մանկապարտեզի սաներին: Չինվորները հերթով բոլորին նվիրեցին դրոշակներ ու գույնզգույն փուչիկներ: Երեխաները հրճվանքով ընդունեցին նվերները և հանդիսավոր քայլերով դեպի զորամասի շարահրապարակ, որտեղ սպաներն ու զինվորները սպասում էին իրենց հյուրերին:

Ողջույնի խոսք ասաց անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Լեռնիկ Ասրյանը: Ելույթ ունեցավ նաև մանկապարտեզի տնօրեն ժամանա Ջաբարյանը: Նա շնորհավորեց բոլորին եռատոնի կապակցությամբ, մաղթեց խաղաղություն, զինվորներին՝ ամուր ոգի, ուժեղ կամք, առողջություն և միասնականություն: Այնուհետև հանդես եկան փոքրիկներն իրենց արտասանությամբ, երգով, պարով և հունորով: Հնչեց արցախի մանուկների զվարթ ու թնդուն երգը՝ խինդով և հուզմունքով լցնելով զինվորների սրտերը: Նրանք քար լուծությամբ ու հիացած հայացքներով էին նայում կենսախիմո, թռչուն թիթեռնիկներին անուշիկ սաների սիրո առաջին թթվածնաթմբ: Մերն առ հայրենիք ու Հայոց բանակ հուզիչ էին, ոգևորող: Չինվորները հիացած էին: Հայրենիքի ապագա պաշտպանները պատրաստ են շարունակելու իրենց քաջ նախնիների սիրունքները, պահելու և պաշտպանելու նրանց կերտած փառավոր հաղթանակները, անկախ

ու սրբազան հայրենիքը: Երգվեցին միշտ բարձր պահել եռագույնը, հայոց քաջերի պատիվը, դառնալ հայրենիքի լուսավոր շողը, վառ գարունը: Մանկական շուրթերից հնչում էր.

Ով այսպիսի արծիվներ ունի, երբեք չի պարտվի.

Եկեք, ուրեմն, երդվե՛ք միասին, որ հայրենիքը չենք տա թշնամուն.

Ու այսուհետև այնպես ապրենք,

Որ մահատակները երբեք չափստան հրենց կատարած գործերի համար:

Տանկային զորամասի հրամանատար, գնդապետ Ժիրայր Պողոսյանը շնորհավորանքի ու հիացունի խոսք ասաց հյուրերին և մանկապարտեզի կոլեկտիվին հանձնեց պատվոգիր՝ մատաղ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու, հայրենամովը աշխատանք կատարելու, զորամասի անձնակազմին բարձր տրամադրություն հաղորդելու համար:

Միջոցառման ավարտից հետո զինվորները գրկեցին մանուկներին ու լուսանկարվեցին: Նրանք ասես կարտոն էին առնում իրենց հարազատների: Տպավորությունն անջնջելի էր: Հրաշալի ընդունելություն, հիասքանչ միջոցառում...

**Աննա ԻՇԽԱՆՅԱՆ**  
**ԱրԴՀ հայ բանասիրության և լրագրության ֆակուլտետի լրագրության 1-ին կուրս**

ՀԱՋՈՂՎԱՑ ՀԱՆՐԵՍ

Մայրենի լեզուն ամենամեծ մանկավարժն է ու դաստիարակը մարդու և, առավել ևս, երեխայի կյանքում, քանի որ երեխան աշխարհն ընկալում է մայրենի լեզվի միջոցով:

Տոն էր Բերձորի 4. Թեքեյանի անվան դպրոցի 1-ին դասարանում, իսկական տոն՝ ուրախ և անկաշկանդ փոքրիկների համար, տոն՝ հույսի և հավատի, ծնողների, ուսուցիչների և դասվար Սվետա Ղառաբյանի համար: Կրկնակի տոն էր ինձ համար և՛ որպես նույն դպրոցի դասվար, և՛ որպես 1-ին դասարանցու ծնող: Արդեն տառաճանաչ դարձած փոքրիկս առաջին ելույթն ունեցավ դահլիճի բեմից:

Այսօր թեև անցել ենք աշակերտական տոնը, սակայն դպրոց ասելով մենք առաջին հերթին նկատում ենք ուսուցիչներին: Իսկ քանի որ ամեն ինչի հիշարժանը առաջինն է, ուստի առաջին ուսուցիչը ամենակարևորն է, գուցե հիմնաքարը՝ դպրոցի 12 տարվա երկար ու ծիզ ճանապարհի:

1-ին դասարանցիների համար քնքուշ մայր է, գիտելիքների անսպառ շտեմարան, հույզերի հորդաբուխ աղբյուր և, ամենակարևորը՝ մեծ հեղինակություն ու դասվար Ղառաբյանը:

Հաջողված հանդեսը հիանալի ներկայացում էր, բայց մինչ այդ թե ինչ է կատարվել վարագույրից այն կողմ, մնում է գաղտնիք: Միայն իր գործով ապրող Ս. Ղառաբյանը գիտե, թե տվյալ օրվա հաղթանակին որքան հոգեմաշ որոնումներ են նախորդել, տառապանքի ինչ ուղիներով է անցել դասվարը, որպեսզի իր սաների հետ միասին վայելի արարման բերկրանքը և այն կիսի իր կոլեկտիվի և աշակերտների հարազատների հետ:

Մայրենի լեզվին և տառաճանաչությանը (Հայոց այբուբե-

նին) նվիրված միջոցառումն անցկացվեց «Հայ ասպետ» հեռուստահաղորդման մասնությամբ: Դասարանը բաժանված էր երեք խմբի՝ կարմիր, կապույտ, ծիրանագույն: Երեխաները տեղեր զբաղեցրին իրենց հագուստների գույներին համապատասխան սփռոցներով ծածկված սեղանների շուրջ:

Երեխաների ուրախությունը կրկնապատկվեց, երբ նվերներ և գովեստի խոսքեր ստացան դպրոցի 12-րդ դասարանցիներից, արհևոմի և կրթության բաժնի ներկայացուցիչներից: Արդեն ետևում են մնացել մեր երխաների դպրոցական առաջին հուզական օրերը: Նրանք ընտելացել են խստապահանջ դասվար Սվետա Ղառաբյանին: Այսօր 1-ին հաշվետվությունը տվեցին Բերձորի հ. 1 դպրոցի ուսուցիչներին, ծնողներին և բոլոր ներկայացուցիչներին: Մանուկ սերնդի դաստիարակում մեծ է այսպիսի ուսուցանող՝ ըստ բովանդակության, և ոչ սովորական՝ ըստ ձևի, միջոցառումների նշանակությունը: Այն սեր է արթնացնում դեպի գիրքն ու գիտելիքը, ապահովում է գեղագիտական ճաշակ, սակայն դա դեռ բոլորը չէ: Այն երեխաների մեջ սերմանում է համերաշխություն, զարգացնում կամքի ուժ, հիշողություն, դաստիարակություն, օգնում նրանց լինել անվելի ուշադիր, ճարպիկ, հմարամիտ, ազատ և համարձակ:

Այսքան տարի աշխատելով տիկին Սվետայի կողքին՝ անվերապահորեն փաստում եմ, որ նա օժտված է բարձր մասնագիտական հատկություններով, ունի աշխատանքի հանդեպ սրտացավ մոտեցում, կազմակերպչական ծիր:

Դուք՝ առաջին ուսուցիչ, մեր մանուկների կյանքի մեծ ճանապարհի առաջին լուսատու փառոսն եք, մոր նման սիրելի, մոր նման մտերիմ ու ջերմ: Ձեր կերպարը, իբրև գեղեցիկ մի տոն, թող միշտ լինի մեր երեխաների՝ ձեր աշակերտների հետ:

2-րդ փուլում ներկայացրին հայ անվանի մաթեմատիկոսներին, գիտնականներին, նկարիչներին, շախմատիստներին: Ուշագրավ էր խմբակային ասմունքը, ինչը փաստում է երեխաների կոլեկտիվի զգացողության և կազմակերպվածության մասին:

Հանդեսն ավարտվեց հաղթական «Քոչարի»-ով:

**Ն. ՍԱՅԱԿՅԱՆ**  
**Քաջաթաղի շրջ. Բերձորի հ. 1 դպրոցի դասվար**

Քաջ դաս

ԹԵՄԱՆ՝ «ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Դաստիարակության մեջ չկա զլխավոր և երկրորդական: Դաստիարակության մեջ բոլորն էլ զլխավոր են՝ և՛ դասը, և՛ դասից դուրս երեխաների բազմապիսի հետաքրքրությունների զարգացումը, և՛ սաների փոխհարաբերությունները կոլեկտիվում:

Վ. Սուլտանլինսկի

Ընդօրինակման քաղաքային բաց դասերի, վերջերս նաև խմբակային բաց պարամունքների հաճախ ենք ականատես լինում: Դրանց գումարվեցին նաև քաղաքային բաց դասերի ժամերը:

Անդրանիկ դասը տեղի ունեցավ մայրաքաղաքի հ. 12 հիմնական դպրոցում: Այն կազմակերպել էր 9-րդ դասարանի դասուղեկ Ջուլիետա Ալեքսանյանը: Թեման՝ «Մասնագիտությունների աշխարհում»: Նպատակն էր ծանոթացնել մասնագիտությունների բազմազան աշխարհի այնպիսի որակներին, որոնք պետք են յուրաքանչյուր աշակերտի, նրանց մոտ ձևավորել տեսական պատկերացումներ մասնագիտությունների մասին, զարգացնել հետաքրքրություն դրանց նկատմամբ՝ կիրառելով տարբեր մեթոդներ: Դասուղեկական ժամի խնդիրներն էին՝ դաստիարակել հարգալից

ված, ուսուցողական և դաստիարակչական նշանակություն ունեցող դասողական դաս, որից թե՛ աշակերտները և թե՛ ներկայացուցիչները մեծ բավականություն ստացան:

Դպրոցի տնօրեն Է. Գաբրիելյանը շնորհակալություն հայտնեց դասողիկին՝ հաջողված և նպատակային դասողական ժամ վարելու, աշակերտներին՝ մասնագիտության ընտրության, կողմնորոշման հարցում անկեղծ վերաբերմունք դրսևորելու, ինքնաբացահայտվելու, անկաշկանդ արտահայտվելու համար:

Խոսելով դասի արժանիքների մասին՝ կրթության բաժնի զլխավոր մասնագետ Գ. Գրիգորյանը խորհուրդ տվեց, որ դասողիկ ժամին ներկայացած դասողները, ընդօրինակելով լավն ու դրականը, դրանք կիրառեն իրենց հետագա աշխատանքում, և նշեց, որ դասողական բաց ժամերի կազմակերպումը պետք է զանգվածային բնույթ կրի:

Կրթության քաղաքային բաժնի պետ Վ. Մարգարյանն արժևորեց այնպիսի կարևորագույն խնդիրների մասին աշակերտների հետ բաց գրույց ծավալվելու անհրաժեշտությունը, ինչպես դաստիարակությունն ու մասնագիտական կողմնորոշումն են: Նա ասաց, որ ծանոթ է Ջուլիետա Ալեքսանյանի աշխատանքի ոճին, և այս դասի հաջող կազմակերպումն ու անցկացումը ցույց տվեց, թե որքանով է դասողը տեղյակ դաստիարակության նորագույն մոտեցումներին, որքանով է տիրապետում տվյալ տարիքային խմբի հետ աշխատանքի նրբություններին: Նա կանգ առավ նաև այն օրինակելի աշխատանքների վրա, որոնք կատարվում են սակավակազմ այս դպրոցում՝ շեշտը հիմնականում դնելով աշխատանքային կարգապահության, սովորողների բազմակողմանի դաստիարակության վրա:

Դասողական բաց դասի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնեցին բոլոր դպրոցներից ներկայացած դասողները: Նրանք արտահայտվեցին թեմայի արդիականության ու հրատապության, դասի կախվորվածության ու ստեղծագործական բնույթի, կազմակերպվածության ու դաստիարակչական նշանակության մասին: Դասը համարվեց նպատակային և ուսանելի:



վերաբերմունք տարբեր կարգի աշխատանքների հանդեպ, օգնել աշակերտներին՝ ձեռք բերել խոր ու բազմակողմանի գիտելիքներ, ճիշտ կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում:

Ուսուցչուհին որպես դասողի բանիմաց է, լավ ուսումնասիրել է յուրաքանչյուր աշակերտի բնավորության առանձնահատկությունները, կենցաղային պայմանները, նախասիրություններն ու ցանկությունները, ծնողների մասնագիտությունը և զբաղմունքը: Արդյունքում մատուցվեց դասավանդման նոր մեթոդներով կառուց-



ՀԱՅՐԵՆԱՆՈՒՆՅՈՒՆ

ԹԵԿՈՒՉ ՆԱՐԱՏԱԿ՝ ԲԱՅՑ ՍԱՐՄԱՆԱՊԱՐ

1991 թվականի ապրիլ-մայիս ամիսներին Խորհրդային Միության ղեկավարությունը փորձեց վերջնականապես փակել Արցախյան հարցը՝ կազմակերպելով հայ ժողովրդի բռնազաղթ ու կոտորածներ իր իսկ բուն հայրենիքում՝ Արցախում: «Օղակ» («Կոլցո») տխրահռչակ գործողությունների ընթացքում աղբյուրներում օժտված, ու նրան թև-թիկունք դարձած խորհրդային բանակը լայնածավալ ռազմական գործողություններ սկսեցին Հյուսիսային Արցախի Գետաշեն, Մարտունաշեն և այլ հայկական բնակավայրերի ուղղությամբ: Ապրիլի 30-ին խաղաղ բնակչության և մարտական ընկերների կյանքը փրկելիս հերոսի մահով մարտիրոսվեց Թաթևուկ Կրպեյանը: Մարտիրոսվեց քաջորդին, ով այսօր դարձել է հերոսացման, հանուն հայրենիքի անձնագոհության զնացող մարտիկի կերպար, ում մասին խոսում ենք հպարտությամբ, երկյուղածությամբ ու հիացմունքով, ում համար երգեր են գրվում:



Ծնվել է 1965թ. ապրիլի 21-ին, ՀԽՍՀ Թալիսի շրջանի Արեգ գյուղում: 1988թ., երբ սկսվեց Արցախյան շարժումը, Երևանի պետական համալսարանի ուսանողությունն առաջիններից էր, որ միացավ համազգային գարթոնքին: Այդ ժամանակ ուսանում էր բանասիրական ֆակուլտետի 3-րդ կուրսում, շուտով տարբեր ֆակուլտետների ուսանողներ արդեն ծանոթացել էինք, և ճանաչեցի նաև Թաթևուկին, ով պատմության ֆակուլտետի առաջին կուրսի ուսանող էր: Աչքի էր ընկնում խելացի մտքերով, սասունցու արտաքինով: Ներկա են եղել նրա ղեկավարած ազգագրական երգի ու պարի խմբի համերգին: Երբ զգացվեց, որ խորհրդային իշխանությունն ամեն ձևով ձգտում է լքեցնել մեր սահմանադրական պահանջը, իսկ Արցախում սկսվել էր հայ բնակչության նկատմամբ հալածանք, արդեն մտածեցինք զինվել և փոքր ինքնապաշտպանական խմբերով անցնել Արցախ՝ պաշտպան կանգնելու մեր հայրենակիցներին, հակառակ դեպքում ևս մեկ եղանակ կիրականանար: 1990 թվականի սեպտեմբերից մինչև իր նահատակության օրը Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության հրամանատարն էր Թաթևուկը, ով 1996թ. սեպտեմբերի 20-ին հետմահու արժանացավ ՀՀ բարձրագույն՝ Ազգային հերոսի կոչման: Հերոսի անունով է կոչվում Քաջաթաղի սահմանամերձ Կովսական քա-

ղաքի միջնակարգ դպրոցը, որի մուտքի մոտ նրա քարե կիսանդրին է՝ ամեն օր աշակերտներին հիշեցնելով, որ այս երկրի սահմանապահները հենց իրենք են:



Ապրիլի 27-ին Կովսականում նշվեց Թաթևուկ Կրպեյանի ծննդյան 48-ամյակը, որին ներկա էին նաև հերոսի այրին և միակ ժառանգը՝ Ասպրամ դուստրը: Խոսելով հոր մասին՝ Ասպրամն ասաց, որ ինքը փոքր է եղել, երբ մարտիրոսվել է հայրը, սակայն հպարտ է այսօր, որ ինքը հերոս-մարտիրոսի դուստր է, և ազատագրված սահմանամերձ Կովսականում կանգնեցված է հոր հուշարձանը: Ապա ավելացրեց. «Երեխաների աչքերում տես այն պատրաստակամությունը, որ նրանք են այս երկրի տերը և կնձանվեն Թաթևուկին: Միջոցառումն սկսվեց դպրոցի աշակերտների ելույթով, ովքեր Թաթևուկի արձանի մոտ հանդես եկան ասմունքով, ռազմախայրենասիրական երգերով: Դպրոցական Ռազմիկ Քարամյանի կատարած «Գետաշեն», «Թաթևուկի երգը» և այլ երգեր, Սմբատի և այլոց ընթերցած բանաստեղծությունները, խոսքերը՝ նվիրված քաջ հայդուկապետին, հուզեցին ներկաներին: Հատկապես հպարտ էին հերոսի կինն ու դուստրը՝ արցունքախառն աչքերով, սակայն հավատով լի, որ այս փոքրիկների մեջ է ապրում Թաթևուկը: Նա էլ է ուսուցիչ՝ հերոսություն, հայրենասիրություն, նվիրվածություն ուսուցանող: Այնուհետև ներկաները ծաղիկներ խոնարհեցին հերոսի կիսանդրու մոտ՝ ևս մեկ անգամ հավաստիացնելով, որ քաջերի արած գործը շարունակվում է ազատագրված տարածքները հայացնելով ու շենացնելով: Տոնակատարության երկրորդ մասը շարունակվեց Կովսականի քաղաքապետարանի բակում: Կովսականցիներին իրենց ելույթները և նրա ղեկավարած «Կարին» ազգագրական պարի խմբի ելույթները: Շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Արտուշ Մխիթարյանն իր ելույթում ասաց, որ Թաթևուկն ամեն օր հայրենասիրության ու նվիրումի դաս է տալիս դպրոցի մոտ 100 աշակերտներին, ովքեր սպրում են Արաքսի ափին: Հավելեց նաև, որ ցանկացած ունձագության դեպքում այստեղի գյուղացին իր ձեռքի բահով էլ կպաշտպանի քաջերի ազատագրած հայրենի ուստանը: ԼՂՀ ԱԺ պատգամավոր, ՀՀԳ խմբակցության անդամ Դավիթ Իշխանյանն ասաց. «Թաթևուկի հասցեին ինչ էլ խոսք էլ ասվի, քիչ է: Ընդհանրում են տոնի առթիվ:

Գտնվում ենք Թաթևուկի երազած հայրենի եզերքում, որը շենանում է, հայանում: Այս երազանքով Թաթևուկն Արցախ եկավ, կռվեց ու մարտիրոսվեց: Իսկական հայի տեսակ՝ զինվոր, պայքարող, հերոսաբար կռվող»: Այնուհետև Դ. Իշխանյանն ավելացրեց, որ մենք դարձրինք ընթացքում շատ կորուստներ ենք ունեցել, սակայն ոգին մնացել է, որն իր մեջ ուներ Թաթևուկը և փոխանցել է սերունդներին: «Վկան դուք եք, դիմելով Կովսականի և հարակից համայնքների բնակիչներին՝ ասաց, Դ. Իշխանյանը: Մենք հպարտորեն քայլում ենք Թաթևուկի ճանապարհով»: Հերոսի դուստրը՝ Ասպրամը, շնորհակալություն հայտնեց բոլորին, ովքեր սատարել և օժանդակել են, որ կայանար միջոցառումը: - Հպարտ են, որ Կովսականում են. այստեղ հորս հոգին է թևածում, և վստահ են, որ ամեն արշալույս խաղաղ է բացվելու: Սկսվող համերգը ոչ միայն ուրախ պահեր կպարզի ներկաներին, այլև կդառնա սկիզբ մեր գործերի: Ընդհանրապես ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությանը, Քաջաթաղի շրջվարչակազմի ղեկավարությանը, ՀՀ պաշտպանության նախարարությանը, հայրիկիս ընկերոջը՝ երգիչ Սկրտիչ Սկրտչյանին և բոլորին, ովքեր օժանդակեցին այս օրը զեղեցիկ և տոնական նշելու համար, ասաց Ասպրամը՝ հավելելով, որ ՀՀ ֆուտբոլի ֆեդերացիան Կովսականում խոստացել է ֆուտբոլի խաղադաշտ կառուցել: Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ ԱԺ պատգամավոր, ՀՀԳ խմբակցության անդամ, Քաջաթաղի շրջվարչակազմի նախկին ղեկավար Կամո Մարտիրոսյանը, շրջվարչակազմի ղեկավար Սուրեն Խաչատրյանը, այլ պաշտոնատար անձինք: Ավարտվեց օրը տոնական խնջույքի սեղանի շուրջ, որտեղ դարձյալ բարեմաղթանքի խոսքեր հնչեցին, երգեր կատարվեցին, եղան կատակներ: Արդեն մայրամուտին եղավ իրաժեշտի պահը: Կովսականցիները մնացին՝ հսկելու սահմանը, երգիչները վերադարձան Երևան՝ մեր երգեր հորինելու՝ նվիրված քաջորդիներին ու սահմանը պահող հայ երեխաներին: Իսկ հերոսների հոգիները դեռ հանգիստ չունեն, մինչև նրանք երազանքը վերջնական ավարտ չունենա:

ԱՍԵՂՆԱԳՈՐԾ ՍԱՆՈՒԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Վերջերս Շուշիի Բերդաձորի ենթաշրջանի Հին Շեն գյուղում նշվեց Արցախյան գոյամարտի հերոս-նահատակ Աննո Սկրտչյանի ծննդյան 60-ամյակը: Միջոցառումը տեղի ունեցավ հերոսի անվան դպրոցում, որտեղ երգերով, ասմունքով ու պարերով ելույթ ունեցան Շուշիի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաները: Զգացվեց, որ կենտրոնում լավ են աշխատել: Որոշեցին ծանոթանալ կրթօջախին, ուր հաճախում է 230 երեխա, աշխատում 18 հոգի, 14-ը՝ խմբակավարներ: Գոհար Մարգարյանն արդեն երկու տարուց ավելի է, ինչ ղեկավարում է կենտրոնը: Նա տեղեկացրեց, որ կենտրոնը հիմնադրվել է 1995 թվականին, ԼՂՀ կառավարության որոշմամբ՝ որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն: Գործում են ասմունքի, թատերական, երգի, պարի, տնտեսագրության, կար ու ձևի, նկարչության, «Հմուտ ձեռքերի», հյուսվածքագործության, դիզայնի, հետաքրքրաշարժ միջոցառումների, փափուկ խաղալիքի, ասեղնագործության, ուլունքագործության խմբակները: Կա ցանկություն ավելացնել դրանք: Կենտրոնը մասնաճյուղեր ունի նաև Քարին տակ և Եղցահող



գյուղերում: Սկզբում կենտրոնը գործել է Շուշիի Մարիամյան պատանական օրիորդաց ընթանում են բնականոն: Ուսմասվար (նախկին տնօրեն) Արշալույս Այդինյանի ուղեկցությամբ ծանոթացա խմբակների աշխատանքին, զրուցեցին խմբակավարների և սաների հետ: Թատերական խմբակի սան Գրիգոր Ազիզյանը հաստատ որոշել է դերասան դառնալ. շատ է սիրում Միեր Սկրտչյանին: Պարի խմբակավար Անուշ Բալասանյանն ավարտել է Ստեփանակերտի պարարվեստի ուսումնարանը: Նկարչության խմբակավար Լուսինե Գարաբյանը եղել է կենտրոնի սան, ավարտել է Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան հումանիտար քոլեջը և այժմ դասավանդում է հարազատ կրթօջախում: Խմբակավարների մեծ մասն ունի համապատասխան մասնագիտական բարձրագույն կրթություն: Լավագույն մանկավարժական փորձի ուսումնասիրման և տարածման նպատակով կազմակերպվում են բաց պարապմունքներ: - Կոլեկտիվի նվիրված աշխատանքի շնորհիվ մեր սաներն ակտիվորեն են մասնակցում հանրապետական մրցույթներին և հաճախա-

կի զբաղեցնում մրցանակային տեղեր: Բոլոր տոն և նշանավոր օրերին կենտրոնում անց են կացվում միջոցառումներ: Հիմնական խնդիրներից մեկն էլ սաների ռազմախայրենասիրական դաստիարակությունն է, ինչի համար հաճախակի ենք այցելում ՊԲ տարբեր զորամասեր, կազմակերպում հանդիպումներ վետերանների հետ: Այսքանով հանդերձ, պետք է նշել, որ կենտրոնի ստեղծման պահից առայսօր աշխատանքները կայացել են անընդհատ մի շենքային պայմաններից մյուսը տեղափոխվելով և ոչ նորմալ պայմաններում: Զկա նյութատեխնիկական բազա: Հատկապես ֆինանսական միջոցներով հնարավոր չէ ստեղծել այն հետաքրքիր աշխարհը, որի միջոցով ձգողական դաշտ կստեղծվի արդի ժամանակաշրջանի սաներին կենտրոնի խմբակներում ներգրավելու և նրանց հետաքրքիր ժամանցը կազմակերպելու համար. ասաց տնօրեն Գ. Մարգարյանը՝ տեղեկացնելով նաև, որ Շուշիի շրջվարչակազմի ղեկավար Վլ. Կասյանը խոստացել է մոտակա ժամանակներում օժանդակել կենտրոնին գույքի և այլ հարցերով:

ՊԱՍՏԱՆԱԿԱՆ ՓՈՐՁ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՃԻԱՏԱՆՔ ՀԱՅՈՑ ՊԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ

Կրթության որակի բարելավման խնդրի հաջող իրագործումը մեծապես կախված է ուսուցչից: Ցանկացած հասարակարգում պատմության ուսուցիչը եղել և մնում է գաղափարախոսական ճակատի սկզբնական ձևավորողը և գլխավոր ներկայացուցիչը: Ահա թե ինչու կարևոր է, որ պատմաբան ուսուցիչներս հիմնավորապես յուրացնենք առարկայի չափորոշչային ու ծրագրային բովանդակությունը, հստակեցնենք կրթական նոր պահանջները:

Քանի որ հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչներում չկան Շուշիի ազատագրման թեմային վերաբերող որակական պահանջները, որոշեցի այն ներկայացնել դասավանդման իմ փորձից:

**Թեմա.- «Շուշիի ազատագրումը»** ըստ հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչների

ների թագն ու պատկեր է: Տեղեկություններ հաղորդել հերոսամարտի կազմակերպիչների, մասնակիցների անձնուրացության, խիզախության, հետևանքների, նշանակության մասին: Հասանելի դարձնել այն գաղափարը, որ Շուշիի հաղթանակը ճիշտ մարտավարության արդյունք էր: Ռազմական առումով այդ հերոսամարտն ամրապնդեց Արցախի և Հայաստանի անվտանգությունը, իսկ քաղաքական տեսակետից Արդեջանին ստիպեց բանակցություններ սկսել: Ծանոթացնել հերոսամարտի իրադարձություններին, աշխարհագրական դիրքին, գործիչներին, ռազմական ուժերին:

Հերոսամարտի կարևորությունն արժևորելու համար անդրադարձ կատարել դեպի անցյալը՝ տալով ցարական բանակի գեներալ-լեյտենանտ Քիչմիշևի, Աղա Մահմեդ խանի, Ցիցիանովի, Արբաս-Միրզայի, ռազմական պատմաբան, ցարական գեներալ-լեյտենանտ Վասիլի Պոտտոյի՝ Շուշիի անմատչելիության և գրավման դժվարությունների մասին նկարագրությունները:

**3. Հիմնական հասկացություններ, առանցքային գաղափարներ**  
Հերոսամարտ, օրհասական դրություն, ոգու ուժ, ԼՂՀ ինքնապաշտպանական ուժեր, Կոմանդոս, ալազամ, «Հարսանիք լեռներում», Ղազանչեցոց եկեղեցին որպես զինապահեստ, խուճապահար փախուստ, կրակակետերի լռեցում, «Կյանքի ճանապարհ» (Շուշի, Լաչին, Գորիս), զինադադար, «Տանկ հուշարձան» խորհրդանշան: Տեղեկություններ տալ անձնակազմի մասին և Շուշի բերդաքաղաքի անվան մասին:

թյուն, բանակաշինություն, պարտադրված պատերազմ, զորահանդես:

թյունների կիրառում:

**7. Ուսուցման մեթոդներ և հնարներ**

Խոսքային, ցուցադրական, էվրիստիկ գրույց, մտքերի տարափ, խիկ համակարգ, հասկացությունների աղյուսակ, ինքնուրույն աշխատանք:

**8. Դասի ընթացքը**

Քանի որ գրույցի մեթոդն ուսուցման առավել տարածված արդյունավետ ավանդական մեթոդներից է, դասն սկսել ներածական գրույցով: Նշել, որ պատմության քառուղիներում, ժամանակների խաչմերուկներում քանի-քանի հողմ ու մրրիկ է անցել այս քաղաքի վրայով, քանի անգամ է պատմության անիվը շրջվել այստեղ, ինչքան արյուն ու ավեր է տեսել նա, դավ ու դառնություն...


Հայ շինարարի կերտած քաղաքը մերթ 26-նացել, փառքի գագաթին է հասել, մերթ էլ հրի ու սրի մատնվել, քարակույտ ու մոխիր դարձել: Դաժան, շատ դաժան եղավ 20-րդ դարն այս քաղաքի համար: Արցախի հիմնավոր մայրաքաղաքի կենսագրության ամենաողբերգական փուլը, թերևս, սկսվել է 1920թ. մարտի 23-ից, որը հետագայում կրկնվեց 1988թ., երբ ազերական խաժամուժի զանգվածային անկարգությունները ստիպեցին շուշեցի հայերին ապաստան փնտրել Ստեփանակերտում: Վերջին հայի արտաքսումից հետո Շուշին դարձավ յուրօրինակ պաշտպան Արդեջանի իշխանությունների ռազմատեղ ծրագրերի իրականացման համար:

Սովորողների մտածողությունը խթանելու, տեղեկատվությունը հիմնավոր ընկալելու և համակարգելու, ստեղծագործական ու քննադատական մտածողությունը զարգացնելու համար երեխաներին հստակ, հակիրճ, նպատակաուղղված առաջադրել ներքոհիշյալ հարցերը:

1. Նորանկախ ԼՂՀ մայրաքաղաքի գլխավերևում նստած վիշապն ինչո՞ւ վտանգավոր էր:  
2. Ինչո՞ւ լուրջ պառնալիք էր Արցախի պետականությանն ու նրա հետագա գոյությանը:  
3. Ինչո՞ւ կենսական անհրաժեշտություն դարձավ թշնամու կրակակետերի ոչնչացումը:

Հարցերից հետո պետք է խրախուսել աշակերտներին շատ մտքեր արտահայտել: Սահմանափակումներ դնել պետք չէ, որովհետև ցանկացած միտք կարող է նպաստել ուրիշ մեկի մոտ հետաքրքիր մտքերի առաջացմանը: Հարցերի ընդհանրացումից հետո անցնել Շուշիի հերոսամարտի նկարագրությանը: Միաժամանակ ցուցադրել նաև տեսաֆիլմ Շուշիի ազատագրման դրվագներից: Վերջում ընդհանրացնելով շեշտել, որ Շուշին դարձավ այն հիմնաքաղաք, որի հաղթական պտույտներն անցան Լաչինով, Քալբաջարով, Աղդամով, Ֆիզուլիով, Կուբաթլուով, Չանգե-լանով: Շուշին և նրան հաջորդած դեպքերն ամբողջ աշխարհին ապացուցեցին, որ հայն իրավունք ունի գոյատևելու ու հզորանալու: Շուշին վավերացրեց այն ճշմարտությունը, որ միայն սեփական արժանապատվություն և կռվելու կամք ունեցող ժողովուրդն է իրավունքներ և հատուցում ստանում: Ընդհանրացնելով դասը՝ ընդգծել, որ Շուշիի հերոսամարտը եղել է Արցախյան պատերազմի հաղթանակների թագն ու պսակը:

Ակտիվացնելով աշակերտների հիշողությունը՝ անդրադարձ կատարել անցած թեմաներին: Առաջադրել 1-2 թուպի ընթացքում նկարել սեփական «Պատմական հիշողության օղակները» և գրել այն թվերը, որոնք վերաբերում են տարբեր ժամանակաշրջաններում բերդ-ամրոցի պաշարմանը:



Այս օղակները հնարավորություն կտան աշակերտներին համոզել, որ Շուշիի ազատագրումը մարտական արվեստի, ազատամարտիկների անձնագրության, սխրագրի, ազգային միասնության արգասիքն է:

Ընդհանրացնելով դասը՝ նշել, որ մայիսի 9-ը Արցախում եռատոնի նշանակությամբ է արժևորվում: Մայիսյան հաղթանակների նշանակությունը միայն օրացուցային տոնակա-նություն չի ենթադրում: Դա կենսակերպ է, որով ապրում է Ղարաբաղի ժողովուրդը և կշարունակի այդպես ապրել մինչև վերջնական հաղթանակ: Ստեփանակերտում կայացած զորահանդեսը՝ նվիրված Շուշիի ազատագրման 20-րդ տարեդարձին, ԼՂՀ պաշտպանության բանակի հզորության համոզիչ ցուցադրումը լինելով, վերստին հաստատում է հայ ժողովրդի մշտագոյության իրավունքը՝ ամրագրված հայ մարտիկի դյուցազնական ուժի անբեկանելի խորհրդով: Մայիսյան եռատոնը մեր միասնականության խորհուրդն ունի: Անհնար է անջատողականության ու պառակտողական վերաբերմունքով հաղթանակների հասնել: Լցվեք մայիսյան հաղթանակների ոգևորությամբ ու գնանք առաջ, դեպի նորանոր հաղթանակներ: Եվ ասենք՝ շնորհավոր բոլորիս հպարտության տոնը:

**Միտքն են ես մայիսը  
Հաղթանակների ամիսը,  
Մեզ բերում է խաղաղություն,  
Եվ մեր ազգին՝ հպարտություն:**

**9. Տնային առաջադրանք**

Սովորել դասը պատմել և պատասխանել հարցերին: Նախապատրաստվել գործնական աշխատանքի (նախօրոք երեխաներին տրամադրել փաստագրական, վավերագրական նյութեր):

ա) Ցարական գեներալ Պոտտոյի «Շուշի» աշխատությունը:

բ) Ցարական գեներալներ Ցիցիանովի, Քիչմիշևի վավերագրական նյութերը Շուշիի բերդի մասին:

Կարելի է կազմակերպել նաև աշխատանք սկզբնաղբյուրի հետ:

- Սկզբնաղբյուրի հետ արդյունավետ աշխատելու համար աշակերտների ուշադրությունը հրավիրել որոշ կողմնորոշիչ հարցերի վրա:

1. Ո՞վ է սկզբնաղբյուրի հեղինակը և ի՞նչ նպատակով է ստեղծել այն:

2. Արդյո՞ք սկզբնաղբյուրի հեղինակն իրադարձությունների նկարագրության մասնակից է, թե ստեղծել է ուրիշների տեսածների, լսածների վրա:

3. Սկզբնաղբյուրը պարզապես տեղեկացնո՞ղ է, թե՞ ունի նաև համոզելու նպատակ, հեղինակը փորձում է անաչա՞ռ լինել, թե համոզող:

4. Սկզբնաղբյուրը գրվել է իրադարձությունների ընթացքում, դրանցից անմիջապես հետո, թե՞ որոշակի ժամանակ անց:

**Լարիսա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ  
Սրբեկ Ա. Սախարովի անվ. հ. 8 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի**

	Ա մակարդակ - միջին Իմանա	Բ մակարդակ բարձր Իմանա	Գ մակարդակ Իմանա
1.	Շուշիի հերոսամարտի տարեթիվը, ամիսը, ժամը 1992թ. մայիսի 8, ժ/շ. 2:30	Շենակետային կրակակետերի ոչնչացման դեղը հերոսամարտից առաջ	Կրակակետերի ոչնչացման հետ կապված մանրամասնությունները
2.	Շերտամարտի ծրագրի և ռազմական գործողությունների դեկլարի անունը, ազգանունը (Արևիկի Տեր Շախոսյան)	Քարին տակ - 1992թ. հունվարի 25	Հարթանակի պատմական նշանակությունը և հետևանքները
3.	Շուշիի գրավման օպերացիայի անունը	Խոջալու - 1992թ. փետրվարի 25	Ինչո՞ւ Շուշին ամրապնդեց հավատը մեխական ռազմական հարթանակների հանդեպ
4.	Ռեճանու գործի թիվը - 2:300	Շուշի կենսագրության ողբերգական փուլերի մասին	
5.	Հայկական ուժերի թիվը - 1:700		
6.	Հայկական կողմի զոհերի թիվը - 70, վիրավորների թիվը - 120		
7.	Հակառակորդի զոհերի թիվը - 300, վիրավորների թիվը - 600-700		
	<b>Կարգրանակ</b>	<b>Կարգրանակ</b>	<b>Կարգրանակ</b>
8.	Ռեկորդի գլխավոր 4 ուղղություններ	Մեկնաբանել մարտավարական արվեստը	Զուգահեռներ անցկացնել, նշել Շուշիի հերոսամարտի դեղը պետականաշինության և բանակապաշտպան գործում
9.	Քայլ հրամանատարների անունները (Օհանյան, Չիբչյան, Ա. Պուլյան Ա.Կարապետյան, Դուշման, Ս.Բաբայան, Յու.Հովհաննիսյան, Վ.Բաբայան, Ալեք Չախոյան և ուրիշներ...)	Շուշիի ազատագրման ռազմական գործողությունների հետևանքներն պատճառները	Արցախյան Շուշիի որպես ողջ հայության փառության խորհրդանշան
10.	Շուշիի աշխարհագրական դիրքը	Քաղաքը «Կյանքի ճանապարհի» դեղը և նշանակությունը արցախահայության հետագա գոյատևման համար: Վեր հանել հերոսամարտի պատճառահետևանքային կապերը	Քաղաքը «Տանկ հուշարձան» խորհրդանշան: Տեղեկություններ տալ անձնակազմի մասին և Շուշի բերդաքաղաքի անվան մասին:

**ՊԱՍԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄԸ**

**1. Հիմնական հարցեր**

- Նախաբան
- Պատերազմական գործողությունների ընթացքը
- «Հարսանիք լեռներում»
- Հաղթանակներ, որ ոչ միայն օրացուցային տոնակառություն ունեն
- Վերջաբան

**2. Նպատակ և խնդիրներ**

Ամրապնդել հարգանքն ու հպարտությունը հայրենիքի, հերոսների, սեփական պատմության, ավանդույթների, ազգային առանձնահատկությունների հանդեպ: Դաստիարակել հայրենասեր, քաջ, ազգային ու համամարդկային արժեքներով, պարտքի զգացումով օժտված ապագա հասարակության քաղաքացի: Նշել, որ պատմությունը ոչ թե սխալների կրկնություն, այլ նրա սրբագրությունը պետք է լինի: Մեր՝ արցախահայերիս համար սխալները սրբագրելու մի փորձ էր Շուշիի ազատագրումը, որն ունեցավ պատմական ու ռազմաքաղաքական մեծ նշանակություն: Շուշին Արցախյան պատերազմի հաղթանակ-

**4. Ուսումնադիտողական պարագաներ**

Դասագիրք, պատմության տետր, Շուշիի ազատագրման քարտեզ, տեսաֆիլմ, հրամանատարների, հերոսների դիմանկարներ, երկտողեր Ջորի Բալայանի «Եղբ ռազմաճակատի օրագրից» գրքից, վավերագրական փաստեր: Նշանավոր ռուս գեներալների նկարագրությունները Շուշիի անմատչելիության մասին:

**5. Ներառարկայական և միջառարկայական կապեր**


- Հայոց պատմություն - 12-րդ դասարան
- Հայոց պատմություն - 11-րդ դասարան
- Հայոց եկեղեցու պատմություն
- Աշխարհագրություն - Ա. Մեյլունյան
- Աշխարհագրություն - Թ. Ամիրջանյան

**6. Դասադաս**

Ներածական դասախոսություն, նոր նյութի ուսումնասիրում, քննարկում, համակարգում, գիտելիքների, կարողությունների, հմտու-

ՃՆՈՐՀԱՆՂԵՍ

«ԻՄ ՍԵՉ ԱՐՑԱԽ, ՔՈ ՄԱՍՆԻԿՆ ԵՍ...»



Վիկտոր Կոնոպլևը անձանք անուն չէ մեր հանրապետությունում: Արցախի գրող, լրագրող Աշոտ Բեգլարյանի և նիժնիովգորոցի բանաստեղծ Վ. Կոնոպլևի միջև 2006 թվականից սկիզբ առած համացանցային ծանոթությունն ու անձնական բարեկամությունը, կարելի է ասել, այսօր հասել է պետական մակարդակի:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության նախաձեռնությամբ Արցախի հանրակրթական դպրոցներում վերջին տարիներս անցկացվող «Ռուսական խոսքի օրեր» միջոցառման գլխավոր դեմքերից մեկն է նա, որոնց մասին «Լուսարարը» ընդարձակ տեղեկատվություն է տպագրել:

Ռուս երիտասարդ բանաստեղծին նորից անդրադառնալու առիթը Մայիսյան եռատոմի կապակցությամբ նրա հերթական այցն էր Հայաստան ու Արցախ և վերջերս լույս տեսած նրա «Հայաստանը սիրո աղբյուր» գրքի շնորհանդեսը, որը տեղի ունեցավ Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում:

Բանաստեղծությունների այդ ժողովածուն լույս է տեսել ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության և Նիժնի Նովգորոցի հայկական համայնքի հասարակական կազմակերպության և ՀՀ-ում «Ռուստորոդնիչեստվո» ներկայացուցչության աջակցությամբ:

Շնորհանդեսն անցավ ջերմ մթնոլորտում: Այն վարեց երգիչ Սար Սարգսյանը:

Ժողովածուն լույս է տեսել բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սոկրատ Խանյանի թարգմանությամբ: «Գիրքը կայացել է» խոսք-առաջաբանը գրել է գրող, հրապարակախոս Ջորի Բալայանը: Ստեղծագործությունները գրքում զետեղվել են երկու լեզվով: Գրքի մեջ տեղադրված է սկավառակ, որում ընդգրկված են Վ. Կոնոպլևի ստեղծագործությունները հեղինակի կատարմամբ:

Ս. Խանյանը հանդիպումը սովորական չհամարեց, այլ պատմական երևույթ՝ նկատի ունենալով այն իրողությունը, որ Բլոկի, Բյուսուվի, ռուս մյուս մեծերի կողմից հայ մշակույթի արժևորման ավանդույթը շարունակվում է այսօր՝ ի դեմս շնորհանդեսի հերոսի և մյուսների: «Այս գիրքը ես համարում եմ մի նոր ներդրում հայ-ռուսական կապերի, երկու ժողովուրդների դարավոր բարեկամության մեջ»,- ասաց նա:

ԱրՊՀ հայ գրականության և լրագրության ամբիոնի դասախոս, դոցենտ Սիրուն Բաղդասարյանի խոսքով՝ «Այս օրերին, երբ թուրք-ազերիները վայրահաչում են Հայաստանի և Արցախի դեմ, մեզ համար շատ կարևոր է, որ մեր կողքին ունենանք ազնիվ բարեկամներ»:

Արցախի գրողների միության նախագահ Վարդան Հակոբյանի համոզմամբ՝ «Մեր ժողովուրդը մեծ է իր մեծ բարեկամներով: Եվ նրանք մեծ չէին լինի, եթե չունենային իրենց շարունակողները»: Այսօր նրանցից մեկն է Վ. Կոնոպլևը, մարդ, ով ոչ միայն փառաբանում է բարեկամությունն ու եղբայրությունը, այլև իրեն համարում է հայ ժողովրդի զավակ: Վ. Հակոբյանը նաև հաճելի անակնկալ մատուցեց. վերջերս Վ. Կոնոպլևին ընդունել են ԼՂՀ գրողների միության շարքերը, և միության անդամության տոմսը հանձնեց նրան:

Ելույթ ունեցավ նաև ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ռուսաց լեզվի և գրականության գլխավոր մասնագետ, պետական տեսուչ Ռուբեն Օսիպովը, ում նախաձեռնությամբ Արցախում անցկացվում են

«Ռուսական խոսքի օրերը»: Ներկայացնելով Վ. Կոնոպլևին՝ նա այն միտքն արտահայտեց, որ պետք է կարողանալ սիրել մեկ ուրիշ ժողովրդի այնպես, որ գրվեն այսպիսի տողեր. «Ղախիճում նստած՝ ես մտածում էի. «Իսկ կպահպանե՞ն ռուս երեխաներն իրենց մայրենի լեզուն այնպես, ինչպես սիրում և գնահատում են հայ երեխաները և մեծերը հեռավոր չճանաչված այս երկրում» շատերին Ռուսաստանում անծանոթ: Այդ մարդկանց մասին պետք է խոսել, նրանցից պետք է սովորել, քանի որ պահպանելով ուրիշի մշակույթը, դրանով իսկ նրանք ուժ ու զորություն են տալիս սեփական մշակույթին: Եվ դա դարաբաղցիների բազմաթիվ արժանիքներից մեկն է»: Նա դրվատանքի խոսք ասաց նաև գրքի թարգմանության առիթով՝ մշելով, որ բոլոր ժամանակներում թարգմանիչները կամուրջ են ձգում մարդկային հոգիների ու ժողովուրդների միջև: Այսօր այդ առաքելության մեջ հոյակապ է հանդես եկել Ս. Խանյանը, ում թարգմանության շնորհիվ արցախցի ընթերցողն ավելի խոր ճանաչեց Վ. Կոնոպլևին:

Նրա խոսքի յուրովի շարունակությունն էր Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ.3 միջնակարգ դպրոցի աշակերտների ելույթը, որոնք հանդես եկան Վ. Կոնոպլևի բանաստեղծությունների արտասանությամբ:

Միջոցառմանը ելույթ ունեցան Արցախի ռուսական համայնքի ղեկավար Գալինա Սոմովան, Արցախյան շարժման ակտիվիստ, ԱրՊՀ դասախոս Գրիգորի Աֆա-



նայանը, համալսարանի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Նունե Առաքելյանը, «Մետրոպ Մաշտոց» համալսարանի ռեկտոր Դոնարա Գաբրիելյանը, գրող, լրագրող Աշոտ Բեգլարյանը՝ շնորհանդեսը համարելով հայ-ռուսական բարեկամության և համագործակցության մի արտահայտություն:

ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանն իր ելույթում անդրադառնալով մեր Գոյապալքարի նվաճումներին՝ այդ շարքում մշեց ձեռք բերած մեր բարեկամներին՝ Ա.Սախարով, Ե.Բոններ, Գ. Ստարովյուտովա, Վ.Կրիվոպուսկով և շատեր, ովքեր մեր պայքարի դժվարին օրերին մեր կողքին են եղել: Նրա խոսքով՝ Վ. Կոնոպլևի սիրո խոստովանության համար պետք է ոչ թե շնորհակալություն հայտնել նրան, այլ պատասխանել նույն կերպ:

Միջոցառմանը ներկա էր այդ օրերին Արցախում գտնվող՝ Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքի ներկայացուցիչ Վահան Բաբախանյանը: Ի պատասխան Վ. Կոնոպլևի «Հայաստանը սիրել ռուսավարի» տողի՝ նա վկայակոչեց գիրքը հայկական ծագումով մարշալների, գեներալների, ծովակալների մասին, որոնցից 100-ից ավելի գեներալներ՝ միայն Պետերբուրգում, որոնք կռվել և նահատակվել են հանուն Ռուսաստանի: Նա ասաց. «Ի՞նչ է դա, եթե ոչ հայ ժողովրդի սերը ռուս ժողովրդի նկատմամբ, եթե ոչ՝ Ռուսաստանը սիրել հայավարի»:

Վ. Կոնոպլևի երախտագիտության խոսքը դարձյալ սիրո խոստովանություն էր առ Արցախ և հայ ժողովուրդը: Նա այդ սերը տարածում է ոչ միայն գրքերով, այլև լրատվական միջոցներով՝ այդ կերպ իր ճանաչած Արցախը ճանաչելի դարձնելով նաև մյուս ազգերին:

«Արցախը վերցրեց ինձ իր ամուր, միևնույն ժամանակ նուրբ ու քնքուշ, բարի ձեռքերով և տանում է՝ հեռուները: Շնորհակալություն, որ դուք կաք»,- այսպես եզրափակեց նա իր խոսքը:

Ս. ԽԱՀԱՏՐՅԱՆ

Վ. ԿՈՆՈՊԼԵՎ

ՍԻՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՎԱՐԻ

Երբ Հայաստանի սիրով ես սնվում, Ասես դեռ նոր է քո հոգին ծնվում, Սկիզբ առնելով Արարատից սեզ՝ Սերն այդ անկաշառ չի հատնում երբեք:

Հայաստան սիրիր ռուսավարի, Ունայնության սին ձևերից հեռու, Ասել է՝ լցվիր տենչերով բարի, Կովկասյան ոգով զինվիր սարերում:

Հայաստան սիրիր ռուսավարի, Մոռացիր հոգսը, սիրիր սրտակեզ, Սիրելով հոգիդ դու այնպես վառիր, Որ թվա՝ կյանքում չես սիրել այդպես:

Հայաստան երկրում ջերմ սերն է տիրում, Սերն այդ ջերմացրու հայկական գինով, Ամբողջ էությանը տրվիր այդ սիրուն եվ սերն այդ շահիր քո սիրո գնով:

Սիրիր Արմենիան զուլաված սիրով, Խաղաղ լուծելով հարցերը բոլոր, Ողջ աշխարհը թող դառնա բուրաստան, Քո ծնողներն են՝ Ռուսիա-Հայաստան: Հայաստան սիրիր նվիրումով վառ, Թևածիր դեպի սուրբ էջմիածին՝ Քո մեջ կրելով խաչը փրկարար եվ Քրիստոսի փառքը սրբածին:

ԻՄ ԱՐՑԱԽ

Իմ սեզ Արցախ, քո սարերում ասես գրկումն եմ սիրո, Հոգիս լիքն է բառ ու բանով, բայց ուժ չունեմ գրելու, Հարթում եմ ես հեռաստանիդ, հողիդ ուժով ու հրով, Հմայքդ տեսնում քո անվան մեջ ու փրփրաբաշ ջրերում:

Արցախ... Քո սուրբ անունը ես հավքիդ երգում լսեցի, Արցախ... Քո սուրբ անունը դու մկաններիդ հյուսեցիր, Արցախ... Դու քո ժողովրդի կրծքի տակ ես արևում, Արցախ... Ոգիդ ծիածանիդ գալիք բոլոր դարերում:

Իմ սեզ Արցախ, քո մասնիկն եմ, ինչպես քաջերն այն բազում, Որ կրծքերով պաշտպանել են քո հողը և բախտը քո, Հեռուներից գիրկդ են գալիս գավակներդ դյուցազուն, Թևեր առնում քո ներկայով ու գալիքիդ հավատով:

Քո աստղերի շողերի մեջ քո սուրբ անունն եմ կարդում, Լսում եմ քո սրտի զարկը՝ ոնց Մորգեի այբուբեն, Ժողովուրդդ ոտքի ելած քո ճանապարհն է հարթում, Շուրթերին քո անունը սեզ ու մետրայան Այբ ու Բեն:

ՂԱՐՍ

Շրջում եմ Ղարսում, ինչպես իմ տանը, Եվ փառք Աստծո, ոչ կույր եմ, ոչ խենթ, Ղարսում տեսնում եմ հին երևանը, Երկվորյակներ են՝ կերտել է մի ձեռք: Քաղաքը նույնն է՝ հին ու գրավիչ, Ուրիշ է դարը, մարդիկ են ուրիշ, Ժառանգորդներն են այն գորշ գայլերի, Ովքեր վերջ տվին երկրի տերերին: Հին եկեղեցին դարձրել են մզկիթ, Կեռ յաթաղանն է գմբեթի վրա, Հմայա բերդն է՝ կանգուն ու վերձիգ, Սակայն նենգ գողն է պահակը նրա: Պուշկինի նման որոնում եմ ես, Բայց Արտեմը չի՞ դուռն իմ դեմ բացում, Հայկական Ղարսին մշուշն է իջել, Գետն իր տերերի կորուստն է լացում: Ու ես խաչազուրկ տաճարի առջև Ծնկի եմ գալիս և աղոթում լուռ Արյամբ ողորված այս հողին, ո՛վ Տեր, Հայկ նահապետի գորությունը տուր:

\*\*\*

Երազում նորից Մասիսը տեսա, Նրա գագաթը՝ ձյունե շրթերում Ու երագիս մեջ լրիվ հասկացա՝ Հարուստ ես՝ երբ քեզ հույսն է օրորում, Երբ քո հույսերին գումարում ես քո Ձգացումները վրեժի, ցասման, Երբ գեմք ես վերցնում, որ չկորցնես Ոչ օջախ ու սար ու ոչ էլ սահման: Բայց հիմա կարոտ ունենք մի անանց, Որ գրկվել ենք մեր նահապետ սարից, Ծնկի ենք գալիս մեր երկրի դիմաց, Որ նենգ գողերն են խլել մեզանից: Կորուսյալ երկրի ցավը իմ սրտում՝ Երագիս տեսա Արարատը սեզ, Բայց հավատում եմ, որ մի օր կյանքում Պետք է գրուցեն Փրկիչ Նոյի հետ:

ՂԱՍՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԶԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ

ԹԵՄԱՆ՝ «ՃԱՆԱՊԱՐԳԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ»

Նոր պահանջներով ու մեթոդներով բավականին հետաքրքիր դասղեկի ժամ անցկացրեց Ե. Չարենցի անվան հ. 7 հիմնական դպրոցի 2-րդ «գ» դասարանի դասվար Իրա Ջաբարյանը: Թեման՝ «Ճանապարհային երթևեկության կանոնները»:

Պատարանը շատ լավ կախավորված էր՝ երթևեկության նշաններ, փուչիկներով լուսակիր, խաչմերուկի մանրօրինակներ, նկարներ փողոցի պատկերներով, տիկնիկ-լուսացույց: Դասի նշանաբանն էր՝ «Ես կարգապահ հետևում եմ»: Դասվարը դասը վարեց աշակերտակներուն մեթոդով: Երեխաները «ուղևորվեցին» ճամփորդության, իսկ թե ինչով են ճամփորդելու՝ իմացանք, երբ նրանք գուշակեցին հանելուկների պատասխանները: Բոլորը կարողանում էին օգտվել պատասխաններից և բացատրել յուրաքանչյուր ազդանշան: Դասն աշխուժացրին խնդրակներն ու երգերը, որոնք շատ մոտ էին աշակերտների հոգուն: Մեզ անչափ դուր եկավ ուսուցչուհու աղջկա դերը: Մենք համոզվեցինք, որ երբ երեխաները տիրապետում են ճանապարհային երթևեկության կանոններին և հետևում դրանց, փողոցը հաստելը դառնում է անվտանգ:

Շնորհակալական խոսքով ելույթ ունեցավ ԵՊՏ ուսուցչուհու Արմեն Օհանյանը: Դասվարն արժանացավ ուսուցչականության պետ՝



փոխգնդապետ Լ. Գաբրիելյանի գրավոր շնորհակալագրին:

ԼԴՅ ԿԳՆ ԿՊՏ տեսուչ Աննա Պետրոսյանը բարձր գնահատեց Ի. Ջաբարյանի աշխատանքը: Եթե առարկայական դասերին գերակշռում են ուսուցչի կրթական, դիդակտիկ, ուսուցանող գործառնությունները, ապա դասղեկի ժամին՝ դաստիարակչական գործառնությունները՝ իրենց սոցիալական հնտությունների ու արժեքային համակարգի խնդիրների ձևավորմամբ: Դասը հազեցած էր ինտեգրված միավորներով՝ մայրենի, խոսք և հաղորդակցում, մաթեմատիկա, երաժշտություն, մարմնաշարժություն, կերպարվեստ, որոնք Զ. Գորդյանի բազմաբնույթ մտածողության հիմնադրույթներն են: Ուսուցիչը դասը վարում էր աշակերտակներուն, զարգացնող ուսուցման դրույթներով: Դենց այս դասերին են զարգանում աշակերտների ճանաչողական հնտությունները, ընդլայնվում նրանց դրդապատճառային շրջանակները:

Դասն ուսանելի էր և օրինակելի: Ներկաներս եկանք այն եզրահանգման, որ քաղաքային դասղեկի ժամերը կարևոր են, և անհրաժեշտ է համախափ կազմակերպել:

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ  
Սրբեկանակերտի ՄՊՍԿ մեթոդիստ

Բարոյական դաստիարակության նպատակն անձի բարոյական զարգացումն ու ձևավորումն է: Բարոյապետ զարգացած մարդը պարկեշտ է, առաքինի և բարեկիրթ:

Մենեկան ասել է. «Սկզբում սովորիր բարի վարքեր, նոր միայն իմաստնություն»:

Բարոյական զարգացումից զուրկ մարդը շրջապատի համար անտանելի բեռ է:

Չարի ու բարու մասին հասկացողությունները երեխաների մոտ դաստիարակվում են վաղ տարիքում: Մասնկուց պետք է սովորեցնել, որ երեխան պատասխանատու լինի իր բառերի ու արարքների համար: Նա պետք է գիտակցի, որ բոլոր գործողություններն ունեն հետևանք: Բայց և պետք է ընդունել երեխայի սխալվելու իրավունքը ու չպետք է հանդիմանել սխալների համար, այլ բացատրել, քննարկել՝ որտեղ էր սխալը՝ այդպես բացատրելով նրա կրկնվելը: Երեխան զարգանում է որպես անհատ՝ իր սխալների հիման վրա փորձ ձեռք բերելով:

Դեռահասության շրջանում երեխան ամենուր է տուն, բակ, թաղամաս, դպրոց, հասակակիցների շրջապատ, հասարակական միջավայր և այլն: Դրանք դառնում են ճանաչողության աղբյուր և նպաստում ճանաչածը յուրացնելու փորձառության ձեռքբերմանը: Այդ ամենը ձևավորում է ինքնահաստատման պահանջները: Գնահատությունն ու յուրացումն էլ երեխայի ինքնադրսևորման խթան են դառնում, և հաճախ երեխային թվում է, թե ինքն արդեն կարող ուժ է: Այդ տարիքում ուսուցիչը կարող է օգնել նրան ճիշտ յուրացնելու բարոյական նորմերն ու բարոյագիտական հիմնարար սկզբունքները, որոնք կդառնան համոզմունքներ:

Վերջերս Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոցի 7-րդ դասարանում դասղեկ Սվետլանա Առուշանյանի կողմից անցակցվեց բաց դաս՝ «Կարո՞ղ եմք մենք ներողամիտ լինել: Ամեն ի՞նչ կարելի է ներել» թեմայով:

Գրատախտակից կախված էր վիրավորանք արտահայտող նկար, իսկ ցուցապատառի վրա պատկերված էր մերկ ծառ: Այլաբանական այս օրինակը յուրովի մեկնաբանեցին աշակերտները՝ նշելով, որ ծառն ինչ-որ մեկից նեղացել է, վիրավորվել: Ուսուցիչը բացատրեց, որ ծառը չորացել է, և նրան կյանքից զրկել են չարությունն ու վիրավորանքը: Ապա զուգարեղծով՝ երևույթը քննեց մարդկային հարաբերությունների հարթության վրա: Ինչպես նշեց նա, մարդը չի կարող ապրել միայնակ, հասարակությունից մեկուսացված: Նա ապրում, հաղորդակցվում է այլ մարդկանց հետ, և նրա բոլոր ուրախությունները, տխրությունները, գործերն անպայմանորեն կապված են միմյանց: Մարդու ամենամեծ առաքինությունն է սերն առ մարդը: Մարդկանց հետ առողջ հարաբերվելիս են ձևավորվում հարգանքն ու սերը: Սերն էլ դաստիարակում է ներելու ունակություն ու ներողամտության արժեքի գիտակցում:

Ուսուցչուհին առաջարկեց միասին ստուգել, թե որչափով են իրենք՝ աշակերտներն ունակ սիրելու և ներելու: Գրեթե անհնար է աշակերտների մեջ ձևավորել համոզմունք՝ առանց նրանց մղելու վիճաբանությունների և ինքնուրույն դատողությունների: Ուսուցչուհին այդպիսի իրավիճակ ստեղծեց, և աշակերտներն ազատ ու անկաշկանդ արտահայտվեցին:

Բանավեճին մասնակցեց ամբողջ դասարանը: Յուրաքանչյուրը հիշեց, թե որ միջադեպն է վիրավորանք առաջացրել, և ինչ զգացմունքներ են ծնվել վիրավորողի հանդեպ (զայրույթ, վիրավորանք, նյարդային գրգռվածություն, ցավ, կատաղություն, վրեժ լուծելու ցանկություն):

Ուսուցիչը համոզեց, որ վիրավորանքը մարդուն կլանում է ամբողջությամբ, թունավորում կյանքը, չի թողնում ազատ լինել մարդկանց շրջապատում:

Չոզում մարում է բարության և ջերմության արևը, սևակոխում են միայնության ամպերը: Այդպիսի մարդը չարությամբ է լցվում բոլոր մարդկանց, ամբողջ աշխարհի հանդեպ:

Մարդը վիրավորողի դեմ մտքերով պայքարում է՝ ծախսելով ֆիզիկական և մտավոր էներգիա, նրա մոտ գերակշռում են բացասական հույզերը: Ուսուցչի այն հարցին, թե ինչ է զգում վիրավորվող մարդը, աշակերտներից յուրաքանչյուրը պատասխանեց, որ կարելի է փորձել հաշտվել, քանզի չարությունը չա-

րություն է ծնում:

Ուսուցչուհին բացատրեց նաև, որ եթե մեկին վիրավորում են, կարող են հանդիպել առանձին կամ մոտիկ ընկերների հետ, վերհանել վեճի շարժառիթները և փորձել խելամտորեն լուծել այն՝ ձերբազատվելով բացասական հույզերից: Իսկ եթե վիրավորող կողմն իրենք են՝ ներեն դիմացինին: Ներողամիտ լինելը մարդուն բարեհոգի է դարձնում ու մեծ առաքինություն է:

Աշակերտների կողմից նշվեց նաև, որ դժվար է ներել դավաճանությունը հայրենիքի և սիրո հանդեպ, ընկերության շրջանում, ինչպես նաև ընտանիքում:

Բեմադրվեց Ավ. Իսահակյանի «Սոր սիրո» բանաստեղծությունը, որը մայրական անսահման սիրո և ներողամտության մասին է:



Ուսուցչուհին բացատրեց, որ այն մարդը, ով հաճախ է վիրավորում, հեշտությամբ է հայտնվում մենակության մեջ. նրա համար դժվար է մարդկանց հետ հարաբերվել և մարդկանց համար էլ՝ նրա հետ: Բացի այդ, վիրավորվող մարդը հակված է անտեսելու իր պահանջները՝ և, հետևաբար, չի կարող մարդկանցից ու կյանքից ստանալ այն, ինչ իրոք իրեն անհրաժեշտ է:

Դետաքրքրական էր դասը նաև իր ուսուցչական ու կրթական կառուցվածքով: Գրատախ-

տակին գրված էին մարդկային հատկանիշներ և զգացմունքներ արտահայտող մի շարք բառեր: Աշակերտներին համարարվեց առանձնացնել այն բառերը, որոնք խանգարում են մարդկանց՝ միմյանց ներելու: Աշակերտները բառաշարքից ընտրեցին վիրավորանք, ատելություն, արհամարհանք, նախանձ, անտարբերություն բառերը, և յուրաքանչյուրը գրեց դրանք տրամադրված թղթի վրա:

Ուսուցչուհին համեմատարեց մանր կտրուկ այդ թղթերը, իսկ դասից հետո շարունակ այդպիսով նաև իրենց հոգուց վանելով չարությունն ու վիրավորանքը:

Այնուհետև աշակերտները կտրտած կանաչ տերևների վրա գրեցին մարդկային լավագույն հատկանիշներ և զգացմունքներ՝ արտահայտող բառեր՝ բարություն, սեր, ոգեշնչում, հետաքրքրություն, զբասրություն, պատասխանատվություն, փոխըմբռնում, հրճվանք, ազնվություն, հիացմունք, անշահախնդրություն, համեստություն, ներողամտություն: Աշակերտները հերթով մոտեցան «բարության ծառին» և կպրիհ կանաչ տերևները: Ծառը կանաչեց, կենդանացավ աշակերտների աչքերի առջև: Ս. Առուշանյանը ցույց տվեց վերակենդանացած ծառն ու փաստեց, որ այդպես է նաև մարդկային հասարակության մեջ: Մարդկային լավագույն հատկանիշները գեղեցկացնում են մարդուն՝ նրան դարձնելով դասարանի ու ուժեղ:

Վերջում աշակերտները պատասխանեցին հետևյալ հարցերին.

- Ի՞նչ սովորեցրեց ձեզ այս դասը:
- Չար և բարի հասկացությունները:
- Ինչպե՞ս և որտե՞ղ եք օգտագործելու այդ գիտելիքները:

Դասից ներկաները հեռացան մեծ հիացմունքով՝ իրենց հոգուն տանելով բարության և ջերմության արևը:

Ժաման ԴՈՒԿԱՅԱՆ  
Սրբեկ. Մ. Մաշտոցի անվան  
հ. 4 հիմն. դպրոցի դասվար

ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԱՇԽԱՐԿ

405 թվական: Հայաստան... Մեր հայրենիքը բաժանված էր Բյուզանդիոնի և գոռոզ Պարսկաստանի միջև: Նրան չէին փրկի ոչ Տիգրան Սեծի սուրը և ոչ էլ Գր. Լուսավորչի խաչն ու կանթեղը, քանի դեռ այս հողի վրա հայոց լեզվով ու հայերեն տառերով մենք չէինք դրոշմել մեր անունը: Այք. Բեն, Գիմ...

Մեսրոպ Մաշտոցն Աստուծո գործությամբ ստեղծեց հայոց գրերը, և մենք այդ գյուտի շնորհիվ գոյատևում ենք մինչ այսօր: Հնոց մագաղաթներով ու գրքերով հարուստ մեր երկիրն իր 36 տառերի ջուկատով դարձրեց շարունակ դիմադրելի է իրեն ոչնչացնել կամեցող ուտիներին: Հայն աշխարհում հայ է մնացել իր այբուբենով:

1645 տարեկան է այսօր հավերժ կենդանի Մեսրոպ Մաշտոցը, բայց ամեն տարի 6 տարեկանների հետ նա մտնում է հայոց դպրոց:

Մայիսի 3-ին Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոցի 1-ին դասարանում կազմակերպվեց «Ճամփորդություն դեպի գիտելիքների աշխարհ» դաս-միջոցառումը 25 տարվա աշխատանքային փորձ ունեցող դասվար Լիլիթ Պետրոսյանի

կողմից: Դասարանի 20 աշակերտները, որոնք մեծ սիրով ու հաճությամբ են սերտել մեսրոպյան տառերը, միջոցառման ընթացքում հիաց-րին ներկաներին:



Դաս-միջոցառումը դաստիարակչական, գեղագիտական, ճանաչողական ներգործություն ունեցավ երեխաների ներաշխարհի վրա: Ուսուցչուհին ծնողների օգնությամբ

զարդարել էր դասարանը:

Պատին Մ. Մաշտոցի մեծադիր նկարն էր, կողքին՝ Այբուբենը: Այն և ձախ մասերում դասվարի նկարած հեքիաթների հերոսների նկարներն էին, իսկ վերևում շողողում արևն էր:

Դասարանի կենտրոնում տեղադրված էր նավը, որի մեջ հեքիաթների հերոսներն էին՝ Կարմիր Գլխարկը, Բուրատինոն, Մալվինան, Քաջ Նազարը, Ուստիանը, Շունն ու Կատունը, Նապաստակը, Սոխրոտիկը, Ջրահարսը, Ծովաստղը, Ալիսը և մյուսները:

Բացման խոսք է ասում դասվարը, այնուհետև երեխաները դաս-միջոցառումը սկսում են «Իմ փոքրիկ նավակ» երգով: Նավակետը պատմում է, որ հեքիաթների աշխարհի հերոսները կորցրել են իրենք թանկարժեք գանձը: Նրանց օգնում են Ոսկե ձկնիկը, Ջրահարսը, Ծովաստղը: Գիտունիկի առաջարկած հինգ հարցերով բացվում է նավի անունը՝ Այբբենարան: Ապա Գիտունիկը նավապետին է հանձնում կորցրած թանկարժեք գանձը՝ Այբբենարանը: Հեքիաթի հերոսները, շնորհիվ երաժշտական մասի ղեկավար Ա. Գաբուլյանի, իրենց երգե-

ցողությամբ հիացրին ներկաներին: Այդ գեղեցիկ օրվա կապակցությամբ իրենց սրտի ջերմ խոսքն են հղել դպրոցի տնօրեն Ա. Մինասյանը և ծնող Ա. Գևորգյանը:

Հիրավի, երեխաները հասկացան, որ առանց գիր ու գրականության կյանքն ունայն է: Ի՞նչ հրաշալի էր տեսնել 6-ամյա այդ հրաշամանուկների աչքերի փայլը, երբ երգում էին, արտասանում (սեփական) մայրենի լեզվով: Եթե այսօրվա 6-ամյա մանուկը մայրական սիրուց զատ իր հոգում ունի նվիրվածություն, սեր ու պատկառանք դեպի հայրենի երկիրը, գիրն ու լեզուն, համոզված եղեք, որ Արցախի աշխարհը գտել է հավիտենության ճամփան: Փառք ու պատիվ այն համբերատար ու խելացի ուսուցիչներին, ովքեր իրենց կյանքի լավագույն տարիները նվիրում են զարմանահրաշ մանուկներին՝ ապահովելով փայլուն ապագա սեփական երկրի ու ժողովրդի համար:

Մելինե ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի  
1-ին կուրսի ուսանողուհի



ՆԿԻՐՅԱԼՆԵՐ

ԿԱՐՄԻՐԱՎԱՆՑԻ ՍՈՒՐԵՆԻ ԳԵՐՊԱՏԱՆԸ



Են թիկունք՝ բուժվելու, այնտեղից էլ գործարարում: Փաստաթղթերում գրված էր. «Կորցրել է աջ ոտը, ունի կոնստուզիա և լսողության խանգարում»:

Ընդառաջեց: Անցավ մեկ տարի, Մակիչ Հասարայանը հանդիպեց ինձ թե՛ Սուրեն, պատկերով եմ քեզ: Ես ծիծաղեցի՝ կիսատ մարդուն ո՞վ կհավանի: Մակիչն էլ ծիծաղեց.

Մակիչն այդ ժամանակ աշխատում էր որպես ֆերմայի վարիչ: Անասնաբույժը Մարտիկոս գյուղից Մաշինկա Հովհաննիսյանն էր:

Մաշինկան խելացի, հմայիչ, գեղեցիկ, երկար ծամերով, շնորհալի, աշխատասեր ու համարձակ արջիկ էր: Մակիչը համոզել էր Մաշինկային, որ Սուրենի հայրը աշխատասեր մարդ էր, կամավոր մեկնել է ռազմաճակատ, գոհվել հանուն Կարմիրավանի ապագայի, իսկ մայրը՝ Մաշինկան (Սուրենի մոր անունը նույնպես Մաշինկա էր), գյուղի առաջին տրակտորիստ կոմունիստն էր: Սուրենը թեկուզ միտասնի է, համոզված է, որ իր աշխատասիրությանը Ստալինը կհաջանի:

Մակիչը չէր սխալվել, ամուսնացան, դարձան գյուղի հարգված և օրհնակելի ընտանիք: Ունեցան 6 երեխա, բոլորին էլ տվեցին կրթություն ու մասնագիտություն, ամենահիննականը՝ դաստիարակված էին:

Գյուղում մատնացույց էին անում Մելունց Սուրենի երեխաներին:

Սկզբում կավահողից պատրաստած աղյուսե տանն էին ապրում: Հետագա տարիներին կառուցեցին երկհարկանի հարմարավետ տուն, այն համարվում էր գյուղի լավագույն տներին մեկը: Պատերազմի հետքերը սկսել էին զգացնել տալ Սուրենին: Հաճախակի էր դիմում բժշկել: Նախագահը, Սկաստի առնելով Սուրենի վիճակը, բրիգադավարին կարգադրում է ձևակերպել պահակ (բայց չաշխատի) և վարձատրել: Սուրենին կանչում են գրասենյակ՝ աշխատավարձ ստանալու:

Ի՞նչ աշխատավարձ, ես չեմ աշխատել, գարնանցած ատուն է: Գանձապետը թե՛ - Ես չգիտեմ, քո անվան դիմաց

գումար կա գրված: Սուրենը հրաժարվում է. - Ինձ ուրիշի քրտինքով աշխատած փողը հարկավոր չէ:

Եվ բարկացած մտնում է նախագահի մոտ: Նախագահն սպասում է, մինչև նա հանգստանա:

- Սուրեն, իմ սուրբ պարտքն է քեզ նմաններին օգնել, պատերազմի առաջին կարգի հաշմանդան ես, 6 երեխայի հայր:

- Չեմ ուզում ուրիշի հաշվին ապրել: - Որ այդպես է, քեզ ուղարկում եմ բոստանչի:

Համաձայնում է: Օրերից մի օր նախագահը գալիս է ստուգելու, իմանալու բանջարանոցի վիճակը:

Մաշինկան է, տեսնելով ասես բ սանրած, մաքուր, առանց մոլախտերի բանջարանոցը, որտեղ ձմերուկն ու սեխն ասես ոչխարի հոտի պես նստած լինեին:

- Սուրեն, դու ոչ թե պատերազմի, նաև աշխատանքի հերոս ես, - ասում է: Չմերկուն ու սեխը հավաքելու ժամանակն էր, գալիս է բրիգադիրը, առանց բարեկերպ մտնում բոստանը, սկսում կոխկրտել: Սուրենը սկզբից նրան համոզում խնդրում է դուրս գալ բոստանից, չկոխկրտել թաղերը, նստել պահակատանը, ինքը կբերի՝ քահուր ցանկանում է:

- Ես եմ բրիգադիրը, շատ կխոսես, կազատեմ աշխատանքից: Սկսում են վիճել, իրար վիրավորել: Սուրենը բարկանում է, բախը վերցնում.

- Քեզ ասում եմ՝ դուրս արի, թաղերը չհիչացնես: Ընդհակառակը, բրիգադիրը բարձրացնում է ձայնը: Սուրենը չի կարողանում համբերել, բախով խփում է բրիգադիրի գլուխը ջարդում: Նա, արյունը սրբելով, գնում է նախագահին զանգառվում: Վերջինս բրիգադիրի հետ գալիս է պարզելու:

- Սուրեն, բա կարելի՞ է, քո բրիգադիրն է... Պատմիր տեսնե՞ք ինչի համար ես գլուխը ջարդել:

- Ընկեր նախագահ, խնդրել եմ, որ պահակատանը նստի: Ասացի՞ քանի ձմերուկ կան սեխ հարկավոր է, ես կբերեմ: Մտել է, գոմի պես կոխկրտել, տորթել թաղերը... և ցույց է տալիս կոխկրտած տեղերը:

Նախագահը ստուգելուց հետո համոզվում է, որ մեղքը բրիգադիրին է: Նրան ազատում է աշխատանքից: Սուրենն ու Մաշինկան ունեցել են 6 երեխա՝ Կառլեն, Լյուդմիլա, Էմիլիա, Կարեն (Կամո), Սարգիս, Նիկոլայ:

Լյուդմիլան ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի տարրական կրթության ու մանկավարժության բաժինը: Աշխատում է Մարտակերտի շրջանի Գետավանի դպրոցում՝ որպես դասվար և

գյուղատիրոջ քարտուղար: Լյուդմիլայի ամուսինը՝ Ժորա Գասպարյանը, ծնվել է 1939թ., Մարտակերտի շրջանի Զափար գյուղում: Խորհրդային բանակում ծառայությունն ավարտելուց հետո ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Սկզբում աշխատել է Կարմիրավանի, հետո՝ Գետավանի դպրոցներում՝ որպես ուսմասվար ու հայրց լեզվի և գրականության ուսուցիչ: Արցախյան շարժման ակտիվ մասնակից էր: Մահացել է 1989թ.:

Լյուդմիլայի տղան՝ Արմեն Գասպարյանը, ավարտել է ԱրՊՀ պատմության ֆակուլտետը: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերին կամավորագրվել է մարտական գործողություններն սկսվելու առաջին իսկ օրերից: Մասնակցել է Մարտակերտի, Մարտունու գյուղերի և Կուբաթլուի ազատագրմանը: Երեք անգամ վիրավորվել է. 1992թ. հունիսի 14-ին՝ Կիչանում, 1993թ. նոյեմբերի 28-ին՝ Մաղավուզում, 1994թ. հունիսին՝ Ջրաբերում: Պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, «Դրաստամատ Կանայան», «Մարշալ Բաղդասյան», «Անբասիր ծառայության համար» մեդալներով, արժանացել մի շարք մարտական պարգևների ու գովասանագրերի: Մայրի գինավորական կոչումով անցել է զինվորական թռչակի:

Էմիլիայի տղան՝ Հովսեփ Հասարայանը, թողնելով ուսումը՝ Արցախյան շարժման մասնակցել է դեռևս հանրապետության շրջանում: Կամավորագրվել է հայրենի Կարմիրավանի ջրկատին, մասնակցել մի շարք ազատագրական մարտերի, 1992թ. նոյեմբերի 19-ին՝ Կիչանի ազատագրման ժամանակ ինքնասպանություն է գործել՝ թշնամու ձեռքը չընկնելու համար: Հետմահու պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար» մեդալով: Նրա մասին ընդարձակ գրված է իմ «Դավիթ պապի տոհմաճար» գրքում:

Կարեն (Կամո) Սուրենի Առստամյանը ծնվել է 1954թ., Կարմիրավան գյուղում: Ավարտել է Գորիսի մանկավարժական տեխնիկումը: Սկզբում աշխատել է որպես ուսուցիչ, հետո՝ Գորիսի ներքին գործերի համակարգում: Դարաբարյան շարժման սկզբից նեթ դարձել էր առաջին հանրահավաքների, ցույցերի շունչն ու ոգին: Ակտիվորեն մասնակցել է Արցախի հայրենական պատերազմին: Մասնակցել է Գորիսի, Լաչինի, Ֆիզուլու, Զորադի, Ջաբրայիլի, Ջանգելանի, Կուբաթլուի ազատագրական մարտերին: ՊԲ-ում ծառայել է մինչև թոշակի անցնելը: Հայրենիքը կանգուն է Կարմենի նման տղաներով, որոնք ծնված լինելով շինականի պարզ օջախներում, ճակատագրական պահին ելնում են պաշտպանելու ազգի անվտանգությունն ու արժանապատվությունը:

Պարգևատրվել է ԼՂՀ «Արիության համար», «Անդրանիկ Օզանյան», ՀՀ և ԼՂՀ «Մարտական ծառայության համար» մեդալներով: Ուներ մայրի գինվորական կոչում:

Մահացել է 2010 թվականին: Սերյան Կարմենի Առստամյանը ծնվել է 1974թ., Գորիս քաղաքում: Դարաբարյան շարժման առաջին իսկ օրից ակտիվ մասնակցություն է ունեցել Գոյապայքարին: Մասնակցել է մի շարք պաշտպանական ու ազատագրական մարտերի՝ Գորիսի շրջանի, Լաչինի, Զորադի, Ջանգելանի և Կուբաթլուի: Չոհվել է 1993թ. սեպտեմբերի 30-ին: Հետմահու պարգևատրվել է «Արիության համար» և «Մարտական ծառայության համար» մեդալներով: Հանգչում է Գորիսի գերեզմանատանը:

Սուրեն Կարմենի Առստամյանը ծնվել է 1977թ., Գորիս քաղաքում: 15 տարեկանից մասնակցել է մարտական գործողություններին: Վիրավորվել է Զայլու գյուղի մերձակայքում: Երևանում վիրահատվելուց հետո ծառայությունը շարունակել է մինչև հրադադարը: Մահացել է 2012թ.:

Նիկոլայ Սուրենի Առստամյանն ավարտել է Գորիսի գյուղատեխնիկումը և Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1979-81թթ. ծառայել է խորհրդային բանակում: Աշխատել է Գորիսի ներքին գործերի (ներկայումս՝ ոստիկանական) համակարգում: 1990թ.՝ Հայաստանի ներքին գործերի կից հատուկ գործազնի վաշտի հրամանատար:

Նիկոլայը, քաջատեղյակ լինելով պապի՝ Արտեմի և հոր՝ Սուրենի հայրենասիրության մասին, երդվում է ազատագրել հայ ժողովրդի հողերը՝ ակտիվ մասնակցություն ունենալով Լաչինի, Ֆիզուլու, Զորադի, Ջանգելանի, Ջաբրայիլի, Կուբաթլուի մարտերին:

Պաշտպանության բանակում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, շարքային զինվորից հասել գնդապետի կոչման: Այժմ էլ ծառայում է ՀՀ զինված ուժերում:

Ազգի հարստանման կարևոր պայմաններից մեկն ուժեղ, իմաստուն անհատականություններ ունենալն է: Այդպիսին է կարմիրավանցի Սուրենի կրտսեր որդին՝ Նիկոլայը, որը հավասարապես տիրապետում է խոսքին ու գեղեցիկ՝ մկրվելով Հայրենիքի ազատագրման պայքարին: Պարգևատրվել է «Անդրանիկ Օզանյան», ԼՂՀ «Վազգեն Սարգսյան», «Մարշալ Բաղդասյան», ԼՂՀ «Արիության համար», «Մյուսյան արծիվներ», «Մարտական ծառայության համար», «Մայրական երախտագիտություն» մեդալներով, արժանացել մարտական, կառավարական այլ պարգևների, շնորհակալագրերի:

Ալեքսանդր ՀԱՄԻԱՅԱՆ

ՀԱՂԹԵՑԻՆ ՆՁՊ ԱՄԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ

Ավարտվեց դպրոցականների առարկայական օլիմպիադայի ՀՀ եզրափակիչ փուլը: Վերջին ակորդը տրվեց «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից, որին Արցախյան մասնակցեց առաջին անգամ: Մասնակցեց և հաղթեց՝ գեղեցիկ մկր մատուցելով Մայիսյան եռատունի կապակցությամբ:

Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում անցկացված օլիմպիադայում Արցախի թիմը ՀՀ 11 մարզերի մեջ առանձնացավ նախ նրանով, որ հավաքականի բոլոր 7 անդամներն էլ արջիկներ էին և ներկայացել էին զինվորական համագեղատուն: Հավաքականի ղեկավար, Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցի զինղեկ, մայր Արսեն Հարությունյանի խոսքով՝ թիմի անդամների ընտրությունը կատարվել է օլիմպիադայի մարզային (հանրապետական) փուլի արդյունքների հիման վրա, որում թեստային առաջադրանքներ էին:

Թիմի կազմում էին Անի Հայրիսյանը, Մանուշ Սիմոնյանը (Ստեփանակերտի հ. 5 հիմն. դպրոց), Լուսինե Շահրամանյանը (Ստեփ. հ. 10 հիմն. դպրոց), Լիանա Իսախանյանը (Մարտակերտի շրջանի Թալիշի միջն. դպրոց), Լուսինե Առստամյանը (Մարտունու հ. 1 միջն. դպրոց), Ասբենիկ Հովսեփյանը (Թաղավարի միջն. դպրոց), Անուշ Բարխուդարյանը (Ասկերանի շրջանի հնամախի միջն. դպրոց): Հարցաշարերի միջոցով ռազմագիտությունից տեսական փայլուն գիտելիքներ ցուցաբերած արցախուհիներն իրենց լավագույնս դրսևորեցին նաև ՀՀ եզրափակիչ փուլում գործնական առաջադրանքներից՝ շարա-



յին պատրաստություն, հրաձգություն, ավտոմատի քանդում-հավաքում, ձեռքի նոնակի նետում, արգելագոտու հաղթահարում մրցաձևերում: Մեր արջիկները մրցանակային տեղեր են գրավել նաև անհատական հաշվարկով: Սաթենիկ Հովսեփյանը՝ շարաինի պատրաստություն և Մանուշ Սիմոնյանը՝ ավտոմատի քանդում-հավաքում մրցաձևերում գրավել են առաջին տեղը, Անուշ Բարխուդարյանը՝ «Օլիմպիադայի ռազմական գիտունի» անվանակարգում: Երկրորդ և երրորդ կարգի և չորս դիվիզիոն արցախյան դպրոցականները ձեռք են բերել տարբեր մրցաձևերում: Արցախյան պատանի ռազմախիցեները մեկ անգամ ևս ապացուցեցին, որ նրանք մեր պատմությունից հայտնի հերոսական կանանց արժանի հետնորդներն են:

Սեֆ. Լրագրություն

ԼՈՒՍԱՐԱՐ հանրագիր՝ ՍԿԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ Գրքերի և փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրական՝ 3171: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 18.05.2013թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: